Azg
Հայկական օրաթերթ
22 ՄԱՐՏ 2000 ՇԱԲԱԹ 52 (2020)

Միշել Լեգրա՝ persona grata

Մեր թերթի երեկվա համարում հրապարակել էինք հայասանյան 4 կազմակերպությունների պահանջը Հայաստանի արտգործնախարարությանը՝ Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրային Հայաստանում անբաղձալի անձ (persona non grata) ճանաչելու մասին, նկատի ունենալով «Ազգ» օրաթերթի մարտի 11-ի համարում Ֆրանսիայի դեսպանի մի շարք ժխտողական արտահայտությունները Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցի վերաբերյալ: «Ազատություն» ռադիոկայանը երեկ տեղեկացրեց, որ մեր արտգործնախարարությունը մերժել է այդ կազմակերպությունների պահանջը, գտնելով որ այն չի արտահայտում լայն հասարակայնության կարծիքը: (Տեղին է հարց տալ՝ եթե արտահայտեր, ի՞նչ էր անելու նախարարությունը): Ըստ նույն ռադիոկայանի, ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչը հանդիպել է պրն Միշել Լեգրայի հետ եւ «լիովին բավարարվել վերջինիս պատասխաններից»: Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը, իր հերթին, որոշել է անարձագանք թողնել 4 կազմակերպությունների պահանջը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«Հայաստանում Հունաստանը ներդրել է ե՛ւ բարեկամություն, ե՛ւ վստահություն, ե՛ւ դրամագլուխ»

«Ազգին» հիմնավորեց Հայաստանում Հունաստանի դեսպան Պանայոտոս Զոգրաֆոսը

Մարտի 25-ին Հունաստանի Ազգային տոնն է. Հունաստանը Հայաստանի աչքերում մի պետություն է, որի հետ մեր հարաբերությունները ունեն հուսադրող եւ անցյալ, եւ ներկա, ու ամենակարեւորը՝ գալիք: Հելլենական Հանրապետությունը Հայաստանի համար հիմնավոր կամուրջ է դեպի եվրոպական հանրություն: Իսկ կամուրջը միավորում է ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական, հոգեւոր զարգացման մայրուղիները: «Ազգը» դիմեց Հունաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Պանայոտոս Զոգրաֆոսին՝ բացահայտելու ռազմավարական մեր գործընկերոջ առաջնահերթությունները հարավկովկասյան տարածաշրջանում:

Հունաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրները մեր տարածաշրջանում:

– Հունահայկական հարաբերությունները ավանդաբար ռազմավարական գործընկերության կարգավիճակ ունեն, որո՞նք են այսօրվա հարցերն իրոք ռազմավարական նշանակություն ունեն եւ ընդգրկում են քաղաքական ու տնտեսական դաշտերի ամենալայն տիրույթները: 99 թ. ընթացքում կատարված եւ 2000 թ. համար նախատեսված բարձր մակարդակի փոխադարձ այցելությունները վերջինիս վառ վկայությունն են: Այս առնչությամբ հիշեցնեմ, որ անցյալ տարվա մայիսին Հելլենական Հանրապետության նախագահ պրն Ստեֆանոպոլոսը Հայաստանում էր գտնվում պաշտոնական այցով, որի ընթացքում մեր երկու երկրները վերահաստատեցին իրենց դիրքորոշումները քաղաքական հարաբերությունների գերազանց մակարդակի առիթով՝ համաձայնելով առավել մեծ ուշադրություն դարձնել տնտեսական եւ առեւտրային կապերի ամրապնդմանը:

Տես էջ 4

ՃԵՊԱՅՑ

Ամերիկյան ծովակալը հետագա հանդիպումների ու քննարկումների ուղի հարթեց

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Հայաստանը շատ բարեկամներ ունի, որոնց թվում նաեւ Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը: Եվ ես բարձր եմ գնահատում ձեր՝ շատ բարեկամներ ունենալու փաստը», երեկ «Զվարթնոց» օդանավակայանում լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ ասաց եվրոպայում տեղակայված ԱՄՆ զորքերի փոխհրամանատար ծովակալ Չարլզ Էբոթը՝ Հայաստան կատարած իր մեկօրյա այցի ավարտին: Սա պրն Էբոթի առաջին այցն էր տարածաշրջան եւ ներառում էր նաեւ Ադրբեջանն ու Վրաստանը: Իր գործընկերների հետ հանդիպումներից զատ, ամերիկյան ծովակալը հանդիպել է նաեւ ՀՀ նախագահին, Աժ խոսնակին, արտգործնախարարին եւ քննարկել տարածաշրջանի անվտանգության, խաղաղության պահպանման ու ամրապնդման հետ կապված հարցեր: Այդ քննարկումների արդյունքը, համենայն դեպս որի մասին խոսեց պրն Էբոթը, ընդամենը նոր քննարկումների հնարավորությունն է: «Այս անգամ ուղի հարթեցինք նոր հանդիպումներ, քննարկումներ կազմակերպելու համար, որոնց արդյունքում կարող է ծնվել պայմանավորվածություն հարաբերությունների հետագա զարգացման վերաբերյալ: Այս պահին կոնկրետ ոչինչ չկա»: Համագործակցության հնարավոր ուղիների մասին խոսելը թողնելով իր հայ գործընկերներին, պրն Էբոթն այնուամենայնիվ չբացառեց, որ արդեն այս տարի գործնական որոշակի քայլեր կարելի է ակնկալել: Վկայակոչելով Հայաստանի բազմաթիվ բարեկամներին, պրն Էբոթը չբացառեց նաեւ փաստորեն Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի համատեղ գոյությունը՝ տարածաշրջանում: Այս համատեքստում ամերիկյան ծովակալը վկայակոչեց իրենց ռազմական նավատորմում ընդունված մի արտահայտություն. «Բոլոր նավերն էլ կարող են բարձրանալ բարձրության ալիքների վրա»: Ի վերջո, բարձրությունն ու խաղաղությունը, շարունակեց Չ. Էբոթը, հնարավոր են միայն տեղական ջանքերով՝ հենց տարածաշրջանի երկրների համագործակցությամբ: ԱՄՆ-ը, մյուս պետությունները կարող են միայն օժանդակել այդ գործընթացներին: Այսօր Հայաստանին օժանդակությունը, ըստ ծովակալ Էբոթի, պիտի նպաստի նաեւ ժողովրդավարության հաստատմանը: Այս առթիվ ծովակալն այցի սուղ ժամանակի մեջ կարեւորեց լրագրողների հետ իր հանդիպումը՝ հաստատելով, որ ազատ մամուլը ժողովրդավարության առաջին չափանիշն է: Այնուհետեւ ծովակալը հրաժեշտ տվեց լրագրողներին եւ, ինչպես ինքը նշեց, գեղեցիկ, մարդկային ջերմությամբ եւ զինվորական կարողություններով մեր երկրին:

«Ռազմական ոլորտում հայ-ամերիկյան համագործակցությունը գերազանց մակարդակի վրա է, եւ այդ առումով աճելիքները բավականին շատ են». նշեց նախագահ Ռոբերտ Քոչարյանը ԱՄՆ զինված ուժերի բարձրաստիճան զինվորականների պատվիրակության հետ հանդիպման ժամանակ

ՀԱՍԱՐՈՍ

Ցեղասպանության ճանաչումը դարձյալ Սենատի օրակարգում

ՍՏԱՄԲՈՒԼ, 21 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Թուրքական «Սաբահ» թերթը գրում է, որ Ֆրանսիայի հայամետ գործիչները կրկին օրակարգ են մտցրել Սենատի կողմից Հայկական ցեղասպանության ճանաչման հարցը: Մարտի 21-ին սենատորները պահանջել են Սենատի Գլխավոր խորհրդի կողմից անհապաղ օրակարգ մտցնել ցեղասպանության ճանաչման հարցը: Սենատում հարցն օրակարգ մտցնելու համար պահանջվում է առնվազն 30 քվե: «Հայկական ցեղասպանության ճանաչման ուղղությամբ Ֆրանսիայում պարբերաբար քայլեր են արվում, որոնք մեծապես անհանգստացնում են Թուրքիային», գրում է թերթը:

Նավթի գների կտրուկ անկում համաշխարհային շուկայում

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Համաշխարհային շուկայում նավթի գները կտրուկ անկում են ապրել, քանի որ նավթ արտահանող երկրների կազմակերպությունը՝ OPEC-ը, եկող շաբաթ Հռոմում կայանալիք հանդիպման ժամանակ որոշելու է ավելացնել նավթի արդյունահանումը: BBC-ի հաղորդման համաձայն, վերջին ամիսներին նավթի գլխավոր սպառողները եւ առաջին հերթին ԱՄՆ-ը, ճնշում են գործադրում OPEC-ի վրա, որպեսզի նրա անդամներն ավելացնեն նավթի արտահանումը, որի հետեւանքով էլ կիջնեն նավթի համաշխարհային գները:

Մաղլեն Օլբրայթը հոկտեմբերի 27-ն է պատճառ համարում

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՐՏ, ՏՆԱՐՔ: Հայաստանում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները դանդաղեցրել են դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը: Այդ մասին հայտարարել է ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթը՝ ամերիկացի կոնգրեսական, Կոնգրեսի Հայաստանի շահերը պաշտպանող խմբի համանախագահ (Congressional Caucus on Armenian Issues) Ջոն Փորթերի՝ դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում Քլինթոնի վարչակազմի կողմից գործադրվող ջանքերի մասին տեղեկացնելու խնդրանքին ի պատասխան:

Դրա հետ մեկտեղ, Օլբրայթը նշել է, որ ԱՄՆ-ը ջանադրաբար է աշխատել Մինսկյան գործընթացի շրջանակներում, ինչպես նաեւ հանդես է եկել դարաբաղյան հակամարտության կարգավորման արագացմանը նպատակաուղղված որոշ նախաձեռնություններով:

Ինչպես հաղորդեցին Ամերիկայի հայկական վեհաժողովում, պետքարտուղար Օլբրայթը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում ձեռնարկվող ջանքերի մասին հարցին որոշակի պատասխան չի տվել՝ նշելով միայն, որ այդ հարցը քննարկվել է վերջերս Ստամբուլում կայացած խորհրդաժողովի ընթացքում եւ Օսմանյան Թուրքիայում 1915 թվականին տեղի ունեցած հայերի ցեղասպանությունը ափոթելով Հոլոքոստի հետ:

ՈՎ՝ ՈՐՏԵՂ

Պաշտպանության նախարարությունում աշխատանքի բաժանում

Մանվել Գրիգորյանը զբաղվելու է արտաքին կապերով, օրենքներով եւ ՌԱՀ-ով

Պաշտպանության նախարարությունում Ռոբերտ Քոչարյանի վերջին փոխնախարարական բարենորոգումից հետո արդեն հստակեցված է նախարարի յուրաքանչյուր տեղակալի գործունեության ոլորտը: Գեներալ-մայոր Մանվել Գրիգորյանին վիճակվել է Վազգեն Սարգսյանի որդի Վահան Շիրխանյանի ղեկավարած կարեւորագույն դաշտը՝ Հայաստանի պաշտպանության նախարարության արտաքին կապերն ու արտաքին քաղաքականությունը, ռազմական օրենսդրության մշակման ոլորտը եւ ռազմաարդյունաբերական համալիրի հետ առնչվող աշխատանքները, բարդագույն գործունեության ապարեզ, ուր Մանվել Գրիգորյանին լուրջ փորձություններ են սպասում, ինչպես նաեւ գործելակերպի վերանայում, քանզի արտաքին կապերը պահանջում են դիվանագիտական ունակություններ՝ Հայաստան-ՆԱՏՕ, Հայաստան-ԱՊՀ-ՈԴ համագործակցության ծիրում: Իբրեւ ավելիս՝ Մանվել Գրիգորյանն առաջինը կբանակցի ՆԱՏՕ-ի պաշտոնական պատվիրակության հետ, այսպիսով՝ երկրապահ-հրամանատարներից ակնկալվում է նոր դերակատարում՝ նավից պարահանդես:

Կադրային ոլորտը տնօրինելու է գնդապետ Արթուր Աղաբեկյանը, սպառազինությունների ատաղձը՝ գեներալ-մայոր Յուրի Խաչատուրովը, իսկ թիկունքը վստահված է այս ոլորտում աշխատանքային փորձառություն ունեցող գնդապետ Գուրգեն Մելքոնյանին: Պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանը, ըստ իրազեկ աղբյուրների, իրեն բավականաչափ ամուր է զգում եւ գործուն զինավարժություններ է անցկացնում տեղակալների իր նոր կազմով:

Ն. Դ.

ՆԱՏՕ-ի պատվիրակությունը Երեւանում

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Մարտի 21-ին Հայաստան է ժամանել ՆԱՏՕ-ի Հարավարեւելյան հրամանատարության պատվիրակությունը՝ հրամանատարի տեղակալ գեներալ-մայոր Զաննի Սմիթի գլխավորությամբ: ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության եւ քարոզչության վարչությունից հայտնեցին, որ գեներալ-մայոր Զաննի Սմիթը աշխատանքային հանդիպումներ կունենա ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ գեներալ-լեյտենանտ Մ. Հարությունյանի, ինչպես նաեւ այլ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների հետ: Այցի ընթացքում կքննարկվեն «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության, ինչպես նաեւ տարածաշրջանային փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՏ

Դասարանում լրագրողների շարքերը գնալով նոսրանում են եւ դասճառն, իհարկե, այն չէ, որ դասադասդասդասներից ու ամբասանյալներից ոմանք վերջին օրերին «մամուլին իր տեղը դնելու» գործընթաց են ծավալել: Դասական նիստերն սկսվում են հայտարարություններով՝ մամուլը (իմա՝ հայելին) ծուռ է ցույց տալիս իրենց դասկերը, չեն ուզում հավատալ, որ դասկերն իրադես ծռված է, եւ մամուլը մեղք չունի, որ դա այդպես է: Փաստաբանը երեկ սդառնաց այդպես շարունակվելու դեպքում միջնորդություն ներկայացնել դահլիճից դուրս հանելու «Հայոց ատյանի» թղթակցին:

Վանո Սիրադեղյանի, Վահան Հարությունյանի եւ 10 այլ անձանց դատավարության մասին վերջին օրերին մամուլը մի բան է գրում՝ դատադասդասդասդաս Վանյա Սուքիասյանը դարգադես խնդիր է դրել հունից հանել Վահան Հարությունյանին եւ դրան զուգահեռ փորձում է դատավարության մյուս մասնակիցների նյարդերի ամրությունը: Այլ կերդ չես բացատրի նրա վարմունքը, որովհետեւ դատադասդասդասը հագիվ թե արդյունք ֆաղի իր ցաք ու ցրիվ հարցերից, որոնք տրվում են ոչ այնքան դատասխան կամ բացատրություն ստանալու ակնկալիքով, որքան ամբաստանյալին մեղադրանքներ ներկայացնելու առիթ են: Մասնավորապես երեկ փաստաբան Սուքիասյանն ամբաստանյալ Վահան Հարությունյանի «դիմանկարն ամբողջացնելիս» նրան համարեց հոգեկան հիվանդ: «Ձեր կյանքում երբեւէ մտավոր, հոգեկան զանգատներ ներկայացրե՞լ եք», ամբաստանյալին դիմեց Վանյա Սուքիասյանը: Վահան Հարությունյանը վերհիշեց, որ 74 թ.-ին, երկրորդ կուրսում վիճաբանելու համար հեռացվել է ռազմական ամբիոնից, որը սպառնալիք էր նաեւ համալսարանից հեռացվելու համար: «Բժշկական տեղեկանք էր հարկավոր՝ առանք, վերականգնվելու համար: Բուժում երբեք չեմ ստացել, համալսարանից հեռացվելուց 2-2,5 ամիս հետո թուղթը հայթայթեցինք եւ վերականգնվեցի»: Բացի այդ, ամբաստանյալն արտասովոր ոչինչ չէր տեսնում, եթե անգամ այդ հիվանդությունն ունենար. «Մեր նախկին լիդերներից շատերին էր նման ախտորոշում տրվել»: Նախագահողն անմիջապես կանխեց ամբաստանյալին «լիդերներից որքան հեռու, այնքան լավ»:

Փաստաբանի հաջորդ մեղադրանքը սա էր՝ Մերգելյանում ատյանելիս ՊԱԿ-ի ատյանակի՞ց է եղել: Այս հարցի դատասխանն արդեն շատ բարդացավ, ամբաստանյալի կողմից փոխադարձ մեղադրանքներ հնչեցին նրա դատադանյալի՝ Սիրադեղյանի եւ այլոց հասցեին: Դրանից վիրավորվեց փաստաբան Սոս Սկրտչյանը, որը հայտարարեց թե չի ընդունում անգամ ամբաստանյալի ներողությունը եւ լքեց դահլիճը՝ այլեւս չվերադառնալու խոստումով, սակայն 10 րոպե չանցած վերադարձավ: Դատական նիստի ողջ ընթացքում ամբաստանյալն ու դատադատադանը իրար մի կերդ հանդուրժելու մթնոլորտում փորձում էին ավարտել այսպես կոչված հարցադատասխանը: Պետք է ասել, որ երեկ Վանյա Սուքիասյանը հասավ իր նդատակին՝ հարցերից մեկը խիստ վրդովեցրեց Վահան Հարությունյանին, եւ նրա տրի ատխատանքը վատացավ: Փաստաբանի դիրքորոշումը ամբաստանյալը համարեց իր դեմ ուղղված սադրանք եւ դրդրուլիստական գրաղմունք: Նախորդ օրերի դես Վ. Հարությունյանը նի դատադատադանը, նաեւ մեղադրող կողմը հաճախակի են դիմում նախագահողին օրենքի դահանջը կիրառելու նդատակով, շեշտելով, որ փաստաբանի հարցերը չեն առնչվում մեղադրանքին, ինչո՞ւ չի հանում հարցերը: Նախագահողի դատասխանն առավել քան հետաքրքիր է. «Ես էլ հետեւելով հարցերին, տպասում եմ՝ միգուցե հիմա կառնչվի»:

Օրվա վերջում փաստաբան Սուքիասյանը հայտարարեց, որ դադարեցնում է՝ հարցեր ուղղել Վահան Հարությունյանին: Լուրը ցնծություն առաջացրեց դահլիճում: Մեղադրող կողմը դատասխանում էր հաջորդ օրը թարմ ուժերով սկսել իր հարցերն ամբաստանյալին, սակայն փաստաբան Սուքիասյանը սառը ջուր լցրեց նրա ոգեւորության վրա՝ Վանո Սիրադեղյանը հարցեր ունի Վ. Հարությունյանին: Պարզվեց, որ Սիրադեղյանին երեք օր է դետք հարցերին դատասխանելու համար, դատավորը չէր ցանկանում նեղացնել ոչ մեկին: Դատական նիստն ընդմիջվեց երկու օրով:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Միգուցե հիմա հարցը կառնչվի՞ մեղադրանքին...»

Վ. Սիրադեղյանն ամբաստանյալ Վ. Հարությունյանին հարցեր տալու համար դեռեւս պետք է պատրաստվի

ԹԱՅՎԱՆԻ ՀԱՐԾ

Չինաստանի դեսպանը շնորհակալություն է հայտնում Հայաստանի ԱԳՆ-ին

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանում Չինաստանի դեսպան Չժու Չժաո Շունը շնորհակալություն հայտնեց Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը՝ թայվանյան հարցի առնչությամբ ՉԺՀ-ի դիրքորոշմանն աջակցելու համար:

Մարտի 21-ին մամլո ասուլիսում չինական դեսպանը ճշտեց Թայվանի խնդրի նկատմամբ Չինաստանի դիրքորոշման սկզբունքները, ընդգծելով,

ՍՊՈՒՏՆԻԿ

որ դա Չինաստանի ներքին գործն է, որը չի կարող եւ դարտավոր չէ ուժի գործադրումից ձեռնդահ մնալու խոստումներ տալ: «Լուրջ փոփոխությունների դեդքում, ինչդիսին է, օրինակ, Չինաստանից Թայվանի անջատումը ցանկացած դատրվակով, Թայվանի օկուդացումը ուրիշ երկրների կողմից, թայվանյան իշխանությունների կողմից Հայրենիքին խաղաղ միավորման հարցի առնչությամբ բանակցությունների հետաձգումը, Չինաստանի կառավարության կողմից ոչինչ չի մնում անելու, քան վճռականորեն գործադրել հնարավոր բոլոր միջոցները՝ ներառյալ եւ ուժ, դատասդանելու համար երկրի ինքնիշխանությունն ու ամբողջականությունը», հայտարարեց դեսպանը:

Չժու Չժաո Շունը ներկայացրեց Չինաստանից Թայվանի անջատման դատմությունը, ընդգծելով, որ իրադրությունը տրվել է Թայվանի ղեկավարի վերջին ընտրություններից հետո, որոնցում հաղթել է Թայվանի ժողովրդավարական-առաջադիմական կուսակցության թեկնածու Չեն Շույբյանը: Նա նշեց, որ Թայվանի առաջնորդի ծրագրահենքը հանգում է Թայվանի անկախության նվաճմանը, որը «չին ժողովրդի համար վտանգավոր ազդանշան է՝ նրան սպառնում է Հայրենիքի դառակտում»:

Չինական դեսպանը նշեց, որ ՉԺՀ կառավարությունը «մեկ դետություն՝ երկու համակարգ» անփոփոխ մոդելով խաղաղ միավորման ուղեգիծ է վարում, եւ որ Սյանգանի եւ Առմենի (նախկին Հոնկոնգի եւ Մակաոի) հաջող վերադարձը Չինաստանի գիրկը առացուցեցին այդ գաղափարի կենսունակությունը: Թայվանի առնչությամբ, ընդգծեց Չժու Չժաո Շունը, ՉԺՀ կենտրոնական կառավարությունը Թայվանին խոստացել է նաեւ նրա սեփական գործերի դահդանում: Սակայն, նշեց նա, Թայվանի իր հայրենակիցներին կոչ անելով խաղաղ բանակցությունների, Չինաստանի Պետխորհրդի վարչատես Չժու Ժունցզին ամենայն որոշակիությամբ հասկացրել է, որ անկախության ընտրությունը Թայվանում նշանակում է դատերազմ:

Չժու Չժաո Շունը նաեւ հայտնեց, որ թեեւ Թայվանի հետ միավորման հարցում չի նախատեսվում որեւէ այլ երկրի սանկցիան ստանալու ընթացակարգ, սակայն Չինաստանի դիրքորոշումը վայելում է շատ այլ երկրների աջակցությունը եւ համակրանքը, որոնք համադատասխան հայտարարություններ են արել:

Դեսպանը հույս հայտնեց, որ վերջի վերջո թայվանյան հարցը լուծվելու է հօգուտ չին ժողովրդի, եւ «որքան շուտ՝ այնքան լավ»:

50 հազարանոց թղթադրամի երկու լավագույն էսքիզ

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՐՏ, ՍՆԱՐՔ: 50 հազար դրամ արժողության հոբելյանական թղթադրամների ձեւավորման համար հայտարարված հայտամրցույթի արդյունքում ընտրվել է երկու էսքիզ: Այդ մասին հաղորդեց Կենտրոնական բանկի էմիսիոն գործառնությունների եւ դրամական դահուստների վարչության դետ Գեւորգ Թումանյանը: Հայաստանում առավելագույն արժողության նոր թղթադրամը նվիրված կլինի 2001 թվականին նշվող քրիստոնեությունը որդես դետական կրոն ընդունելու 1700-ամյա տարելիցին: Մրցույթը հայտարարվել էր ս.թ. հունվարի 14-ին: Թումանյանը նշեց, որ էսքիզների հեղինակները լրամշակում են իրենց առաջարկությունները: Դրանից հետո ԿԲ հանձնաժողովը կանվանի հաղթողին, որը 100 հազար դրամ մրցանակ կստանա: Թղթադրամները դատրաստող ֆիրման կընտրվի միջազգային մրցույթի ընթացքում, որը դեռ չի հայտարարվել: Դրամանիշները նախատեսվում է թողարկել ոչ մեծ տդաքանակով: Դրանք լայն կիրառման համար չեն եւ կվաճառվեն որդես հուշանվեր կամ կհանձնվեն 2001 թվականի հոբելյանական հանդիսությունների դատվավոր հյուրերին: Ավելացնենք, որ քրիստոնեությունը որդես դետական կրոն ընդունելու 1700-ամյակի կառդակցությամբ Հայաստանի Կենտրոնական բանկը 1999 թվականին թողարկել է ոսկե եւ արծաթե 5 հուշադրամ:

Հայաստանի Կենտրոնական բանկը կմասնակցի երրորդ հազարամյակի սկզբին նվիրված միջազգային ծրագրին: Գեւորգ Թումանյանի ասելով, այս տարի 24 երկրներ ընդգրկող ծրագրի շրջանակներում Հայաստանի ԿԲ-ը շրջանառության մեջ կդնի խորհրդանշական 2000 դրամ անվանական արժեքով արծաթյա դրամ: Հուշադրամները կդատրաստվեն բրիտանական Royal Mint դրամահատարանում:

Թումանյանը նշեց, որ 2000 թվականին ԿԲ-ը մտադիր է թողարկել բանկարժեք եւ գունավոր մետաղներից դատրաստված 5 հուշադրամ: Մյուս չորս հուշադրամների թեմատիկան առայժմ չի որոշվել եւ յուրաքանչյուր առանձին դեդքում կհաստատվի կառավարության որոշմամբ: Ընտրությունը կախված է միջազգային շուկայի կոնյունկտուրայից, որտեղ, հիմնականում, իրացվում են հայկական հուշադրամները:

ԴԻՄՈՒՄ ԱԺ-ՈՒՆ

Գեղարքունիքի բնակիչները չեն կարող իրացնել կարտոֆիլի ու կաղամբի բերքը

Գեղարքունիքի մարզի բնակչությունը հայտնվել է ծանր վիճակում: Կես տարվա տնաջան ատխատանքով ստացված կարտոֆիլ, որոնց իրացումը լուրջ բարդություններ հետ է կապված: Պատգամավորի եւ գյուղացիների առաջարկները հետեւյալն են տրամադրել երկաթգիծ, օգնել դայմանագրեր ձեռք բերել դահեստավորված բերքն արտահանելու, արդրանքափոխանակումներ կատարելու դիզվառելիքի հետ, կամ էլ դետությունը բերքը գնի գյուղացուց՝ մի քանի ամիս հետո վճարելու դայմանով, ու բաժանի բյուջետային այն ատխատողներին, որոնց ամիսներով չի վճարվում ատխատավարձ: Հարցը հնչեցվել է, մնում է կառավարությունն իր ուսադրությունը սեւեռի բարձրացված լուրջ խնդրի վրա:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

«Միսս ուսանողուհի» մրցույթն այս տարի կկայանա հուլիսին

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Միսս ուսանողուհի» մրցույթն այս տարի կկայանա հուլիսին: Հայաստանում ավանդական է դառնում գեղեցկության այդ մրցույթի կազմակերդումը, որն առաջին անգամ անցկացվեց անցյալ տարի Ուսանողական մշակութային կենտրոնի կողմից:

Ինչդես մարտի 21-ին լրագրողների հետ հանդիդմանը նշեց «Միսս ուսանողուհի» մրցույթի գրասենյակի նախագահ, Ուսանողական մշակութային կենտրոնի նախագահ Արման Անտոնյանը, մրցույթի նդատակը երիտասարդության շրջանում գեղեցիկը քարոզելն է: Անտոնյանը հայտնեց, որ հուլիսին կայանալիք «Միսս ուսանողուհի-2000» գեղեցկության մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի բոլոր բուհերի ուսանողուհիները, ինչդես նաեւ Արցախի ուսանողությունը: Հայտերի ընդունումը կսկսվի մայիսի 1-ից եւ կտեւի երկու ամիս: Ժյուրիի կազմում կլինեն նաեւ արտերկրից հրավիրված հյուրեր: Բացի առաջին եռյակի ընտրությունից, մրցույթում շնորհվելու են նաեւ այլ տիտղոսներ: «Միսս ուսանողուհի» տիտղոսին արժանացած գեղեցկուհին, բացի մրցանակներից, կստանա նաեւ ուղեգրեր՝ մասնակցելու «Միսս Հայաստան» եւ «Աշխարհի միսս ուսանողուհի» գեղեցկության մրցույթներին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՉՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յողումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձուում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒԹԱԳԻԿ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Մեր տնտեսության ախիլլեսյան գարշապարը

Հանուն ծխախոտի եւ բենզինի խորհրդարան-կառավարություն խմորումներ

Բենզինի եւ ծխախոտի հարկային դրույքաչափերի բարձրացմամբ 99 թ. օգոստոսից առ այսօր Հայաստանի տնտեսական դաշտում լուրջ խմորումներ են, որոնք հույժ բացասաբար են ազդում բյուջեի եկամտային, հետեւաբար նաեւ ծախսային հոդվածների վրա: Երբ օգոստոսի 1-ին էկոնոմիկայի նախարար Արմեն Դարբինյանը վարչապետ Վազգեն Սարգսյանի կառավարության ծրագրում հիմնավորում էր բյուջետային ճեղքվածքի հաղթահարումը ծխախոտից եւ բենզինից գանձվող հարկերի բարձրացման հաշվին՝ պնդելով, թե այս ոլորտները գերշահույթներ են առահովում, որոշ տնտեսական եւ քաղաքական գործիչներ բանավիճում էին՝ համոզված, որ բենզինի եւ ծխախոտի հարկերի բարձրացումը սոցիալական ճգնաժամի կհանգեցնի: Երեկ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը ԱԺ դահլիճում ներկայացրեց երկու օրենքի նախագիծ՝ բենզինի եւ ծխախոտի: Բենզինի տիրույթում կառավարությունը հարկային դրույքաչափի նվազեցման չգնաց, իսկ ներկայիս շուկայում բենզինի բավականաչափ բարձր գինը դարձյալ մեկնաբանվեց միջազգային շուկայի նենգաղավ տատանումներով. այժմ բենզինի 1 լիտրն արժե 270-280 դրամ, իսկ միջազգային շուկայում 1 տոննա բենզինի արժեքն է 230 դոլար, այնինչ մինչ այս գինը տատանվում էր 1 տոննայի համար 180-230 դոլար տիրույթում: Հայաստանյան բենզին ներկրողներից պետք է գանձվի 1 տ համար 120 դոլարին համարժեք հաստատագրված վճար, որին կգումարվի մաքսային արժեքի 44 տոկոսին համարժեք բնաթափանցական վճար՝ մինչեւ 85 դոլար, այսինքն՝ 1 տ բենզին ներկրողը պետք է պետական գանձարան վճարի 205 դոլար: Ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Գագիկ Արզումանյանը մեզ հավաստիացրեց, որ դա ավելի քիչ է, քան հարեւան Վրաստանում: Բենզինի ճգնաժամ Հայաստանում առկա է, եթե ամսական միջինը մինչ այս սպառվում էր 22 տոննա, ապա այսօր 18 հազար տոննա է ներկրվում եւ դեռ ամբողջապես էլ չի սպառվում: Առաջարկն ընկել է, ինչպես Հայաստանում տնտեսական ակտիվության նվազման, այնպես էլ բնակչության գնողունակության անկման պատճառով: Ա.Ժ-ն այս օրենքը վավերացրեց անվրդով:

Հայաստանը մաքսանենգների դրախտ

«Ես ուրախ կլինեի, եթե մեր տնտեսության զարգացման գարշապարը լիներ հարկային եւ մաքսային քաղաքականությունը, սակայն այդ զարգացումը պայմանավորում են այլ գործոններ», պնդեց Գագիկ Արզումանյանը՝ փորձելով պատգամավորներին հորդորել այս եռօրյայի ընթացքում վավերացնելու ծխախոտից գանձվող ակցիզային հարկի եւ մաքսատուրքի փոփոխությունները: Խորհրդարանը ընթրոստացավ՝ ասելով՝ պնդելով, թե այս ոլորտները գերշահույթներ են առահովում, որոշ տնտեսական եւ քաղաքական գործիչներ բանավիճում էին՝ համոզված, որ բենզինի եւ ծխախոտի հարկերի բարձրացումը սոցիալական ճգնաժամի կհանգեցնի: Երեկ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը ԱԺ դահլիճում ներկայացրեց երկու օրենքի նախագիծ՝ բենզինի եւ ծխախոտի: Բենզինի տիրույթում կառավարությունը հարկային դրույքաչափի նվազեցման չգնաց, իսկ ներկայիս շուկայում բենզինի բավականաչափ բարձր գինը դարձյալ մեկնաբանվեց միջազգային շուկայի նենգաղավ տատանումներով. այժմ բենզինի 1 լիտրն արժե 270-280 դրամ, իսկ միջազգային շուկայում 1 տոննա բենզինի արժեքն է 230 դոլար, այնինչ մինչ այս գինը տատանվում էր 1 տոննայի համար 180-230 դոլար տիրույթում: Հայաստանյան բենզին ներկրողներից պետք է գանձվի 1 տ համար 120 դոլարին համարժեք հաստատագրված վճար, որին կգումարվի մաքսային արժեքի 44 տոկոսին համարժեք բնաթափանցական վճար՝ մինչեւ 85 դոլար, այսինքն՝ 1 տ բենզին ներկրողը պետք է պետական գանձարան վճարի 205 դոլար: Ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Գագիկ Արզումանյանը մեզ հավաստիացրեց, որ դա ավելի քիչ է, քան հարեւան Վրաստանում: Բենզինի ճգնաժամ Հայաստանում առկա է, եթե ամսական միջինը մինչ այս սպառվում էր 22 տոննա, ապա այսօր 18 հազար տոննա է ներկրվում եւ դեռ ամբողջապես էլ չի սպառվում: Առաջարկն ընկել է, ինչպես Հայաստանում տնտեսական ակտիվության նվազման, այնպես էլ բնակչության գնողունակության անկման պատճառով: Ա.Ժ-ն այս օրենքը վավերացրեց անվրդով:



«Գրանդ տոբակո» ընկերության նախագահ Հրանտ Վարդանյանի սերմերը ծլարձակում են, եւ պատգամավորները համախմբվեցին տեղական արտադրողներին պաշտպանելու դրոշի ներքո: Այս օրենքի նախագիծը իրականում նախատեսում էր օգոստոսի 1-ին ընդունած ծխախոտից գանձվող հարկային դրույքաչափի նվազեցում. 1 արկղ ներմուծված ծխախոտի համար 150 դոլարի փոխարեն կգանձվի 100 դոլար, իսկ հայրենական արտադրության 1 արկղ ֆիլտրով ծխախոտից 55 հազար դրամի փոխարեն 80 դոլար: Այսպիսով՝ կառավարությունը նախատեսում է 20 դոլարին համարժեք տարբերություն ներմուծվող եւ տեղում արտադրվող ծխախոտների համար: Գագիկ Արզումանյանը ներկայացրեց տագնապահարույց թվեր, Հայաստանը մաքսանենգների դրախտն է: Եթե 1998 թ. տվյալներով Հայաստան ներկրվել է 26 հազար տուփ արտասահմանյան ծխախոտ, ապա 99 թ. օգոստոսի 1-ի հարկային դրույքաչափի բարձրացումից հետո, որին զուգընթաց կազմավորվեց եւ սկսեց գործել պետական եկամուտների միավորյալ նախարարությունը՝ իբրեւ հարկային տեսչության, մաքսային վարչության եւ հարկային ոստիկանության հոգեզավակ, պատշգամբային տվյալներով Հայաստան ներմուծվում է 3500 արկղ ծխախոտ: Պետական այրերից եւ ոչ մի այնքան միամիտ չէ հավատալու, որ մենք սկսել ենք չծխել արտասահմանյան ծխախոտներ, ոչ, պարզապես 22.500 արկղը Հայաստան է ներմուծվում մաքսանենգ ճանապարհով՝ հարստացնելով ոչ թե պետբյուջեն, այլ հիշյալ նախարարության ախտասակիցներին: Եւ «Միասնության», եւ «Իրավունք ու միաբանության» խմբակցության պատգամավորները դժգոհեցին պետական եկամուտների միացյալ նախարարության կառավարումից՝ համոզված, որ հարկային, մաքսային ատյանների ու հարկային ոստիկանության մեկտեղումը մեծացնում է կոռուպցիայի դաշտը: Հրանտ Վարդանյանը վիճակագրություն էր ներկայացրել՝ ըստ որի, եթե ներմուծվող ծխախոտի հարկային դրույքաչափը չնվազեցվի, ապա տեղական արտադրողը 30 մլն դոլարի օգուտ կտա բյուջեին, այնինչ այսօր իրենք ընդամենը 10 մլն դոլար կարող են հատկացնել: Հայրենական արտադրողների հետ ուղղակի կապված են նաեւ տեղացի ծխախոտագործները՝ ըստ «Գրանդ տոբակոյի», իրենց արտադրած ծխախոտի հումքի 70 տոկոսը հայկական է: «Օրինաց երկիր» խմբակցության անդամ Արծրունի Աղաջանյանը արտառուչ մի պատմություն հրապարակեց, թե ինչպես ամուսինը տնից ամանեղեն է տարել եւ փոխել երկու տուփ ծխախոտով, ուստի ժողովուրդն աղաղակում է՝ մի բարձրագրեք ծխախոտի հարկերը, եւ խորհրդարանն ականջալուր 50 կողմ, 9 դեմ, 22 ձեռնպահով մերժեց օրենքի նախագիծը: Համարձակվենք կանխատեսել, որ հոնքն ուղղելու փոխարեն Ա.Ժ-ն ծխախոտագործների աչքն է սպառնում հանել, քանզի ապրիլի 1-ից լրանում է կառավարությանը տրված լիազորության ժամկետը, եւ այս օրենքը չընդունելու դեպքում հարկային դրույքաչափը ոչ միայն չի մնա այսօրվա մակարդակին, այլ կաճի 100 տոկոսով:

Այսօր խորհրդարանը անսաց Դավիթ Լոիյանի հանձնաժողովին, եւ էներգետիկ ոլորտում յուրացումների միջանկյալ հաղորդման համար սահմանեց նոր կարգ՝ հիմնական գեկուցումը 25 րոպե, երկու հարակից գեկուցումներ 10-ական րոպե, ինչպես նաեւ պատգամավորական խումբ-խմբակցությունների ելույթներ 7-ական րոպե: Ոգեւորենք հեռուստադիտողներին, որովհետեւ այս կարգի համաձայն հանձնաժողովի բացահայտումները կհեռարձակվեն Ազգային հեռուստատեսությամբ:

Էներգետիկ բախիչ ցանցերի սեփականաշնորհումը «Օրինաց երկիրը» փորձեց դնել օրենսդրական հունի մեջ՝ առաջարկելով երեկ իսկ հրավիրել արտահերթ նիստ, ուր կքննարկվեր էներգետիկայի բնագավառում մասնավորեցման ընթացակարգի մասին օրենքը, սակայն, ի դեմս «Միասնության», Ա.Ժ խոսնակ Արմեն Խաչատրյանը հարցը հետաձգեց: Առջեւում հայտարարություններն են, որոնց միակ աղը դարձյալ Ծաղիկ Ռուբեն Գեւորգյանն էր, որը հայկազյան բառապաշարի կիրառմամբ անարգանքի սյունին գամեց անանուն քաղաքական ուժերին, որոնք իբրեւ թե փորձում են վարկաբեկել «Երկրապահին», թեեւ նախագահի վերջին նշանակումները փաստում են, որ «Երկրապահին» ոչ թե վարկաբեկում են, այլ պաշտոն տալիս, իսկ «Պաշտոնը վարկաբեկո՞ւմ է», հարցադրումը երկիմաստ է:

ՆԱՐԻԿԵ ԳԻԼԱՐՅԱՆ

1920 թ. մարտի 23-ին հրկիզվեց Շուշին

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 21 ՄԱՐՏ, ՏՆԱՐՔ: Մարտի 23-ին Շուշի քաղաքում թաթար-ազերիների կողմից 1920 թվականին իրականացված հայկական ջարդերի 80-ամյակի լրանալու առնչությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ հանրապետությունում մի շարք միջոցառումներ կանցկացվեն:

Շուշիում հայկական ջարդերի զոհերի հիշատակին նվիրված աղագա հուշարձանի՝ փոխարեն հուշաքար կդրվի, որի մոտ մարտի 23-ին ծաղիկներ դնելու կգան իշխանությունների եւ հասարակայնության ներկայացուցիչները: Ստեփանակերտի պատմագավառագիտական թանգարանում հատուկ անկյուն կբացվի, իսկ ԼՂՀ «Տոների եւ հիշատակման օրերի մասին» օրենքում Մարտի 23-ը, որպես Շուշիում 1920 թվականին իրականացված ջարդերի հիշատակման օր հաստատելու առնչությամբ փոփոխություն կմտցվի:

1919-1920 թվականներին Լեռնային Ղարաբաղի հայերը տեղի Հայկական Ազգային ժողովի գլխավորությամբ, սփոփված էին գենը ծեռին պաշտպանելու իրենց երկրամասը զավթիչներից: Թեեւ ուժերը հավասար չէին, իսկ զոհերը՝ հսկայական (այդ շրջանում Ղարաբաղում զոհվել էր յուրաքանչյուր հինգերորդ բնակիչը), ղարաբաղցիներին հաջողվեց պաշտպանել իրենց երկրամասը:

Հատկապես ողբերգական էր երկրամասի մայրաքաղաք Շուշիի ճակատագիրը, որն իր բնակիչների թվով Անդրկովկասում հինգերորդն էր: 1920 թվականի մարտի 22-ի լույս 23-ի գիշերը ադրբեջանաթուրքական զորքերն ու հրդեհի ավազակախմբերը, գեներալ Սուլթանովի գլխավորությամբ (որը նախկինում Ադրբեջանի կառավարության կողմից Լեռնային Ղարաբաղի նահանգապետ էր նշանակվել), հարձակվել էին Շուշիի վրա եւ մինչեւ երեկո ամբողջովին այրել ու ավերել էին քաղաքի հայկական թաղամասերի մեծամասնությունը: Այդ եւ հաջորդ օրվա ընթացքում բնակչության երկու երրորդը կազմող 30 հազար հայերից զոհվել եւ անհետ կորել էին ավելի քան 20 հազար մարդ: Գերի վերցված հազարավոր հայեր, այդ թվում նաեւ կանայք ու երեխաներ, բարբարոսաբար ոչնչացվել էին: Հրետանային գնդակոծման եւ հրդեհման հետեւանքով քաղաքի մեծ մասն ամբողջովին ավերվել եւ հիմնովին հրդեհվել էր:

Հայկական ջարդերի մասնակիցներից մեկը՝ Ադրբեջանի բանակի սպա Ալիմարդանբեկովն իր եղբորն ուղղված նամակում, որը պահպանվել է արխիվներում, գրել էր. «Քո ճանաչած էրմենի Շուշան (այսինքն՝ հայկական Շուշին) ամբողջովին հրդեհվել է: Միայն 5-10 տներ են մնացել: Հազարավոր հայեր գերեվարված են: Բոլոր տղամարդկանց կոտորել են, նույնիսկ խալիֆին (եպիսկոպոսին), բոլոր նշանավոր եւ ունեւոր մարդկանց: Մահմեդականները կողոպտել են հայերի անհաշիվ գանձերը եւ այնպես են հարստացել, որ լկտիացել են»:

Իր պատմության վերջին 80 տարիների ընթացքում Շուշին դեռ շատ ողբերգական էջեր է ունեցել: Խորհրդային Ադրբեջանը շարունակում էր հակահայկական քաղաքականությունը՝ ոլանաչափ էթնիկ զտում կատարելով: 1988 թվականին Լեռնային Ղարաբաղի պատմական միջնաբերդի վերջին հայ բնակչությունը (շուրջ 2000 մարդ) տեղահանվել էր քաղաքից: 1991 թվականի աշնանից Շուշի քաղաքից կանոնավոր հրետանային գնդակոծման էր ենթարկվել ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտը: 1992 թվականի մայիսի 9-ին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը գրոհով ազատեցին քաղաքը:

Ներկայումս Շուշի է վերադառնում տեղահանված բնակչությունը, որի մեծամասնությունը կազմում են փախստականներ Բաքվից, Սումգայիթից, նախկին Ադրբեջանական ԽՍՀ քաղաքներից եւ շրջաններից: Քաղաքն աստիճանաբար վերականգնվում է, կարգավորվում է տնտեսական կյանքը, բարելավվում են սոցիալական պայմանները:

ԵՐԵՎԱՆ

Հրդեհը 2-3 մլն դրամի վնաս է պատճառել Հայ FM ռադիոկայանին

Հայ FM 105,5 ռադիոկայանը 3 օր եթեր դուրս չի գալիս՝ մարտի 20-ին Փավստոս Բուզանդի 1/3 հասցեում գտնվող իր տեղակայության շենքում բռնկված հրդեհի պատճառով: Հրդեհն, ինչպես հայտնի է, ծագել է նույն շենքում գտնվող քաղաքացիական ճարտարապետության վարչության տարածքում եւ, 4-րդ հարկից բարձրանալով մինչեւ 6-րդ, այրել է ռադիոկայանի եթերային ստուդիան: Տուժել են փաստորեն երկու հաղորդակները՝ խիստ թանկարժեք, ինչպես նշեց ռադիոկայանի հիմնադիր Անահիտ Թարխանյանը, մալուխային ողջ ցանցը, համակարգիչներ, 3000 սկավառակներ: Ընդհանուր առմամբ, Ա. Թարխանյանը վնասները գնահատեց 2–3 մլն դրամի սահմաններում:

Երեկ ռադիոկայանում արդեն ընթանում էին վերանորոգման աշխատանքներ, դիջեյները մրից մաքրում էին այրված սենյակները: Ռադիոկայանի հիմնադիրը պատրաստվում է դիմել պետական գույքի կառավարման, տրանսպորտի եւ կապի նախարարություններին՝ եթերի իրավունքի եւ տարածքի վարձակալության համար հատատագրված վճարներից ազատելու խնդրանքով, որպեսզի եղած բոլոր միջոցները կենտրոնացվեն վերանորոգման աշխատանքներն օր առաջ ավարտելու համար: «Մեր եկամտի միակ աղբյուրը գովազդն է, ու այդ առումով անթույլատրելի է եթերից յուրաքանչյուր օրվա մեր բացակայությունը», նշեց Ա. Թարխանյանը: Այնպես որ, մինչ հրշեջ ծառայությունը ճշտում է հրդեհի պատճառները, ռադիոկայանը պատրաստվում է մոտ օրերս վերադառնալ եթեր:

Լ. Գ.

ԳՅՈՒՄՐԻ

Բնակարաններ՝ անշարժ գույքի շուկայից

Հավանաբար առաջիկա 1-2 ամսում գյումրեցի 150 անօթեւան ընտանիքներ կունենան իրենց իսկ նախընտրած բնակարանը: Իհարկե՝ որոշակի չափանիշների սահմաններում: ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալությունը, որի ներկայացուցիչներն այս առիթով անցած շաբաթ երկրորդ անգամ հանդիպեցին Շիրակի մարզպետի հետ, պատրաստակամություն է հայտնել ֆինանսական միջոցներ տրամադրել՝ գյումրեցի ընտանիքներին ընձեռելով անշարժ գույքի շուկայից բնակարանների գնման հնարավորություն: Ընդսմին բնակչին կտրամադրվի ոչ թե գումարը, այլ որոշակի արժեք ունեցող գնման վկայագիր, իսկ մինչ այդ ՀՀ կառավարությունը պետք է ճնարկի համապատասխան հայեցակարգը, որին հավանություն տալու դեպքում ծրագիրը գործի կդրվի: Մեկ տարվա համար նախատեսված փորձնական այս ծրագիրը չի փոխարինի բնակարանային շինարարությանը, բայց որոշես երկրաշարժից անօթեւաններին բնակարաններով ապահովելու մի նոր ձեւ կարող է իր նպաստը բերել խնդրի լուծմանը: Համարվում է նաեւ, որ բնակարանն այսպես 1,5–1,7 անգամ էժան է նստում, քան նորը կառուցելու դեպքում:

Վկայագրերի արժեքների, դրանց ներդրման մեխանիզմների հետ կապված եւ այլ մանրամասներ դեռ պիտի ճշտվեն: Մի բան բերեւս հստակ է, որ քաղաքացիներին բնակարանների գնման վկայագրերի տեսքով ցույց տրվելիք ֆինանսական աջակցությունը կլինի անհատույց:

Ընտանիքների ընտրության համար ամերիկյան կողմին կտրամադրվի քաղաքի անօթեւանների եւ անշարժ գույքի շուկայի ամբողջ տեղեկատվական բազան:

Գ. Մ.

հարցազրույց

«Հայաստանում Հունաստանը ներդրել է և՛ բարեկամություն, և՛ վստահություն, և՛ դրամագլուխ»

Սկիզբը էջ 1

99 թ. Հունաստանի արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարները նմանապես եղան Հայաստանում, մինչ մեծ թվով հայ նախարարներ այդ թվում Թուրքիան եւ Ադրբեջանն այդ համակարգից դուրս են թողնում Իրանը եւ Ռուսաստանը:

– Ո՞րն է Հունաստանի դերը մեր տարածաշրջանում կայունություն ամրապնդելու եւ երաշխավորելու գործում՝ հաշվի առնելով առկա յուրահատկությունները եւ արդեն ձեւավորված համագործակցությունը Հայաստան-Հունաստան-Իրան ուղեգծում: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը վերջերս առաջարկեց տարածաշրջանային անվտանգության համակարգի մի մոդել, սակայն մի շարք երկրներ՝ այդ թվում Թուրքիան եւ Ադրբեջանն այդ համակարգից դուրս են թողնում Իրանը եւ Ռուսաստանը:

- Հունաստանի արտաքին քաղաքականությունը հիմնված է բարիդրացիական սկզբունքի, ինչպես նաեւ միջազգային օրենքները հարգելու վրա: Մենք հարգում ենք յուրաքանչյուր երկրի իրավունքը՝ որոշելու՝ իր ներկան եւ ապագան: Այս սկզբունքներն ինքնին արդեն երաշխիք են խաղաղության եւ կայունության: Ավելին՝ Հունաստանն այս տարածաշրջանի միակ երկիրն է, որը մաս է կազմում բոլոր միջազգային կազմակերպությունների (ՆԱՏՕ, Եվրամիություն, ԵԽ, ԵԱՀԿ...), դրանով իսկ նա կարող է ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարաբերություններ հաստատել տարածաշրջանի բոլոր երկրների հետ:

Հունաստանի համար նշանակալի կարեւորություն ունի հատկապես Հարավային Կովկասը, քանզի Հարավային Կովկասը մաս է կազմում առավել մի մեծ տարածքի, որը պարփակում է Բալկանյան թերակղզին: Ավելի որոշակի արտահայտվելով պետք է նշենք, որ Հայաստանում Հունաստանը ներդրել է եւ բարեկամություն, եւ վստահություն, եւ դրամագլուխ: Այս իսկ պատճառով ձեր խաղաղությունն ու կայունությունը բխում են նաեւ մեր շահերից: Մենք մեծ հետաքրքրությամբ հետեւում ենք տարածաշրջանային անվտանգության համակարգ ստեղծելու զանազան առաջարկություններին, բայց գտնում ենք, որ վերջինս պետք է լինի համապարփակ, այսինքն՝ պետք է հարգի տարածքի բոլոր երկրների գոյություն ունեցող իրավունքները եւ դառնա անկեղծ համագործակցության համընդհանուր ֆորում եւ ոչ թե ազդեցությունների գոտին ձեւավորող գործիք մի քանի երկրների ձեռքում՝ ի վնաս մյուսների: Բայց նման համակարգի ձեւավորումը ենթադրում է բացի վստահությունից, նաեւ լուրջ նախապատրաստություն, որպեսզի չխախտվի հավասարակշռությունը, եւ չստեղծվեն նոր անկայունության ու լարվածության դրսեւորումներ՝ առաջ բերելով ճիշտ հակառակ արդյունքը: Հունաստանը պատրաստ է այստեղ իր պատշաճ ներդրումը կատարել: Անվտանգության ցայժմ տարբեր երկրների կողմից առաջարկված զանազան գաղափարներն առավել վերլուծական եւ հասկանալի ձեւով ներկայացվելու կարիք ունեն: Առաջարկված նախագծերում այսօր տարբերություններ կան, որոնք լուրջ խնդիրներ են հարուցում: Ես հասկանում եմ նաեւ, որ կայունության ցանկացած պայմանագիր ներառում է ռազմական ոլորտը, ինչն ավելի է բարդացնում հարցը: Այն ուղղակի կախված է տարածաշրջանային մի շարք այլ խնդիրների լուծումից:

Հայաստան-Հունաստան-Իրան եռակողմ համաձայնությունն արդյունք է այդ երեք երկրների իրականաղաքական կամքի՝ ուժեղացնելու համագործակցությունը եւ զարգացնելու ավանդական երկարամյա կապերը՝ հատկապես տնտեսական ոլորտում: Եռակողմ պայմանագիրն ուղղված չէ մի երրորդ երկրի դեմ եւ բաց է բոլորի առաջ: Այն կառուցված է հավասարակշռության խնդրի վրա եւ հաշվի է առնում գործընկերոջ իրական հնարավորություններն ու ներուժը, ինչու չէ, նաեւ սահմանափակումները, միջազգային ու տարածաշրջանային պարտավորությունները: Ցայժմ բոլոր հանդիպումներն անցել են բարյացակամ եւ անկեղծ մթնոլորտում՝ վկայելով, որ կողմերի միջեւ կա քաղաքական կամք, վստահություն եւ բարեխղճություն: Սա տարբեր սոցիալ-քաղաքական կառուցվածք եւ ավանդույթներ ունեցող երկրների միջեւ հնարավոր համագործակցության շատ լավ օրինակ է, եւ ցարդ արդյունավետ է եղել հատկապես էներգետիկայի ու հաղորդակցության ասպարեզներում: Էներգիայի բնագավառում ներկայումս քննարկվում են մի շարք կարեւոր ծրագրեր՝ ինչպես օրինակ, Հայաստան-Իրան գազամուղը, որոնք կխթանեն Հայաստանի եւ Իրանի համար էներգիա ձեռք բերելու այլընտրանքային աղբյուրները: Մեր նպատակն է նաեւ խթանել արդյունաբերության զարգացման, բարձր տեխնոլոգիաների, ինչպես նաեւ գրոսաշրջության ոլորտները:

– Հունաստանը ՆԱՏՕ-ի անդամ է, միաժամանակ եւ լավ հարաբերություններ ունի Ռուսաստանի հետ: Հայաստանը, լինելով Ռուսաստանի ռազմավարական գործընկերը, պատրաստ է նաեւ համագործակցության ՆԱՏՕ-ի կառույցներում: Բայց Հայաստանի պատասխանատուն ՆԱՏՕ-ում Թուրքիան է, Հունաստանն ի՞նչ դերակատարում կարող է ունենալ Հայաստան-ՆԱՏՕ գործընկերությունն առավել արդյունավետ դարձնելու հեռանկարում:

- Նախ ճիշտ չէ ասել, որ ՆԱՏՕ-ում Թուրքիան է Հայաստանի պատասխանատուն, ճիշտ է, փոխգործողությունների մի թուրք պատասխանատու է Հայաստանի համար, սակայն պետք չէ ընդհանրացնել այդ երեւույթը: ՆԱՏՕ-ն իրավունք ունի նման պատասխանում նշանակելու ցանկացած ազգության պատասխանատու՝ լինի նա թուրք, հայաստանցի կամ այլ երկրի քաղաքացի: Այդ պատասխանում նշանակվածները պարտավոր են վարել ՆԱՏՕ-ի եւ ոչ թե իրենց՝ ազգային քաղաքականությունը: Այնուհանդերձ տեղյակ եմ, որ այդ հարցը բազմիցս բարձրացվել է Հայաստանի կողմից ՆԱՏՕ-ի պատասխանատու անձանց հետ՝ ինքնակումների ժամանակ: Խնդիր կա առավել սերտացնել Հայաստանի համագործակցությունն այդ դաշնության հետ, եւ հստակությունը, ինչ խոսք, կարող է նպաստել այս խնդրին: Այսուամենայնիվ, մեր դեսպանատունը ՆԱՏՕ-ի քառամյա կոնցեպտային օրակը հանդիսանալու իր հանգամանքով նույնպես իրականացնում է որոշակի կապ Հայաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ: Հունաստանի դերն այս առումով ավելի կարեւոր է, քանի որ Հունաստանը ՆԱՏՕ-ի միակ դաշնակիցն է, որը պահպանելով առաջավոր պատասխանատու համագործակցություն Հայաստանի հետ՝ միաժամանակ նաեւ, ինչպես նշեցիք, գերազանց հարաբերությունների մեջ է Հայաստանի ռազմավարական գործընկեր Ռուսաստանի հետ: Ավելին՝ մենք լիովին հասկանում ենք Ալյանսյան դաշնության հետ հարաբերությունների զարգացումը, բարձր գնահատելով վերջերս ստորագրված **պայմանագրի կետերը խախտելու երկկողմ մեղադրանքները, ո՞րն է հանգուցալուծումը:**

- Չնայած Արմենտելը մեր երկրների միջեւ տնտեսական համագործակցության միակ օրինակը չէ, այնուհանդերձ ամենակարեւորն է: Դա երկրում ամենաէական օտարերկրյա ներդրումն է, եւ հավատացած եմ, որ այդ գործարքն արդյունք էր փոխվստահության: Հայաստանը վստահեց հեռահաղորդակցության զգայուն ոլորտը հույներին, իսկ Հունաստանը հսկայական գումար ներդնելով՝ վստահեց Հայաստանին, այն էլ մի ժամանակահատվածում, երբ, դժբախտաբար, օտարերկրյա ներդրումները կախված են քաղաքական չափորոշիչներից:

Ճիշտ է, հակասություններ կան, եւ երբեմն նույնիսկ պայմանագրի խախտման մեղադրանքներ են հնչում: Պետք է նշել, որ Արմենտելի բաժնետոմսերի գնման պայմանագիրը շատ մանրամասն եւ բարդ ձեւակերպված իրավական փաստաթուղթ է, որը նման շատ այլ տեքստերի, տարբեր մեկնաբանությունների տեղիք կարող է տալ: Այնպես որ, հակասությունները բնական են, բայց դրանք մեղադրանքների չպետք է փոխակերպվեն: Դրանք պետք է լուծվեն բարի կամքի եւ վստահության ոգով: Հավատացած եմ, որ երկու կողմերն էլ պետք է շահագրգռված լինեն, որ Արմենտելը դառնա հաջողակ ձեռնարկություն, որպեսզի երկրում ավելի շատ ներդրումների խթան լինի: Չմոռանանք նաեւ, որ Արմենտելը մասնավոր մարդկանց ներդրում է: Հունական կառավարությունը վարում է անհատական, մասնավոր ընկերությունների գործերին չխառնվելու քաղաքականություն: OTE-ն գրանցված է ֆոնդային բորսայի միջազգային ցուցակում, եւ նրա գործարքները խստորեն հսկվում են միջազգային ներդնողների կողմից: Միջազգային փորձը ցույց էր տալիս, որ ընկերություններն ավելի լավ են գործում, երբ կառավարությունները, առանց միջամտելու նրանց ամենօրյա գործունեությանը, իրենց վերապահում են սոսկ հսկողի դերը: Սա նշանակում է, որ չնայած Հայաստանի կառավարությունը պետք է ներկայացուցիչ ունենա Արմենտելի տնօրենների վարչության կազմում, այդ ներկայացուցիչը, սակայն, չպետք է լինի հեռահաղորդակցության նախարարը: Նախարարը չպետք է կառավարման ոլորտում խոսք ունենա, այլ սոսկ քաղաքական վերահսկողի դեր կատարի:

– Ինչպե՞ս է Ձեզ պատկերանում Հայաստանի զարգացումը հոկտեմբերի 27-ի ողբերգական ցնցումից հետո:

- Հոկտեմբերի 27-ի դեպքերն ուժեղ հարված հասցրին Հայաստանի ժողովրդավարական եւ տնտեսական զարգացմանը: Վազգեն Սարգսյանի եւ Կարեն Դեմիրճյանի նման քաղաքական ղեկավարների սպանությունը խոովություն առաջ կբերեր ցանկացած երկրում, առավել եւս ժողովրդավարությունը նոր թեւակոխած երկրներում, որտեղ, հասկանալիորեն, քաղաքական կուսակցություններն ավելի շատ են կազմված իրենց առաջնորդների, քան քաղաքական ծրագրերի կամ գաղափարախոսության հետ: Ներքին անկայունությունը, որը նման դեպքերից հետո երկրի քաղաքական կյանքի բնորոշ հատկանիշներից է, սահմանափակող գործոն է քաղաքական բնականոն զարգացման բնագավառում եւ անշուշտ վհատեցնող՝ օտար ներդնողների համար: Բայց մենք պետք է գովեստի խոսքեր հղենք այն բոլոր քաղաքական դեմքերին ու ուժերին, որոնք նպաստեցին իրադրության կայունացմանը եւ իրենց խիզախ ու խելացի կեցվածքով խուսափեցին վատթարագույնից: Հայ ժողովուրդը նույնպես ցուցաբերեց բարձր կարգապահություն եւ ինքնազսպվածություն այդ ողբերգական օրերին: Հետագա ամիսներն ապացուցեցին, որ հայ ժողովուրդն ու նրա ղեկավարներն իրոք ցանկանում են ամրապնդել երկրի ժողովրդավարական կողմնորոշումը: Դեպքերը կարող են արագացնել դեպի կայուն ժողովրդավարական քաղաքական կյանքի կառուցումը տանող գործընթացը, բայց դա արդեն հայերի խնդիրն է: Միջազգային հասարակայնությունը կարող է միայն օժանդակել այդ գործընթացին՝ առաջարկելով համընդհանուր բաղադրատոմսեր, որոնք կիրառելի են ողջ աշխարհում, արդյունքներն էլ միշտ թե շատ կանխատեսելի են: Հայերն իրենք ավելի ճիշտ կարող են գիտակցել, թե որն է լավն իրենց երկրի համար:

Ինչ վերաբերում է Հունաստանին, մենք սկզբից ելեք նշեցինք, որ մեր համագործակցությունն էլ ավելի է զարգանալու, որպեսզի կարողանանք ամեն կերպ օժանդակել Հայաստանին: Թույլ տվեք այս առթիվ հիշեցնել, որ դեպքերից հետո մեր կողմից Հայաստանին տրամադրված մարդասիրական օժանդակությունն ավելացել է:

– Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ո՞րն է Հունաստանի դիրքորոշումը:

- Հունաստանը պատշաճում է Ղարաբաղի խնդրի խաղաղ եւ տեւական լուծմանն ուղղված Մինսկի խմբի բոլոր ջանքերը: Այդուհանդերձ, մենք չէինք ցանկանա լուծումներ առաջարկել: Պարզ է, որ ամեն մի լուծում, որն ընդունելի է շահագրգիռ կողմերի, ընդունելի կլինի նաեւ Հունաստանի համար: Որպես ընդհանուր նկատառում նշեմ, սակայն, որ հաղթող լուծումները միշտ չէ, որ լավ եւ տեւական են լինում: Մյուս կողմից, խնդիրը հնանալով առավել բարդանում է եւ լուծումներ գտնելն էլ դժվարանում, քանի սատուս էվոն ամրապնդվում է: Այնպես որ, ժամանակի գործոնը խիստ կարեւոր է եւ պետք է հաշվի առնվի: Բայց դա ամենավճռականը չէ: Վճռականը բանակցությունների միջոցով հասնելն է այնպիսի մի լուծման, որը չի սպառնում շահագրգիռ կողմերի ոչ ներքին կայունությանը, ոչ էլ արտաքին անվտանգությանը: Վճռորոշ է նաեւ գտնել այնպիսի հավասարակշռված լուծում, որը փոփոխելու շահագրգռվածություն չի արտահայտի կողմերից եւ ոչ մեկը նույնիսկ հանգամանքների թողտվության դեպքում: Տնտեսական օժանդակության եւ ընդլայնված գոտու վերակառուցմանն աղավինելը, իհարկե, օրինական է, բայց չպետք է դա օգտագործվի որպես խթան կամ խոչընդոտ հաղթող լուծումների:

Հայերն ու հույները խոր արմատներով պատմական անցյալ ունեցող ազգեր են: Մեր պատմական փորձառությունները հաղթահարելը հեշտ գործ չէ՝ չնայած երբեմն անհրաժեշտ է գտել փոխզիջումային լուծումներ, որոնք շահավետ կլինեն ավելի լայն առումներով: Ուղենիշը, բոլոր դեպքերում, պետք է լինի այն, ինչ վաղամեռիկ վարչապետ Վազգեն Սարգսյանն ինքն ասել էր մի անգամ. «Մենք ցանկանում ենք լավ հարաբերություններ հաստատել բոլորի հետ, բայց ոչ ի հաշիվ մեր ազգային հպարտության»: Հայ ժողովուրդը լիովին գիտակցում է այս պայմանը:

ՆԱԲԻՆԵ ԳԻԼԲԱՐՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

ՄԱՀ

Հորս Քյոլերը կդառնա կարգադրիչ-տնօրեն

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՐՏ, ՄՆԱՐՔ: Մարտի 23-ին ավարտվում է Միջազգային արժութային հիմնադրամի կարգադրիչ տնօրենի ընտրության ընթացակարգը: Այդ մասին տեղեկանում ենք ինտերֆեքսից: ԱՄՀ-ի ղեկավարի պաշտոնի միակ թեկնածուն Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի նախագահ Հորս Քյոլերն է: Ինչպես ավելի վաղ հաղորդել էր ՀՀ ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանը, Հայաստանը ողջունում է նրա նշանակումը ամենաազդեցիկ միջազգային ֆինանսական ինստիտուտի ղեկավարի պաշտոնում:

Հորս Քյոլերը ծնվել է 1943 թվականի փետրվարի 22-ին Լեհաստանում: Խորհրդային բանակի հարձակումից փրկվելու նպատակով նրա ընտանիքը տեղափոխվել է Արեւելյան Գերմանիա, իսկ 1953 թվականին անցել է Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն: Այստեղ նա սացել է տնտեսագիտության եւ քաղաքատնտեսության դոկտորի աստիճան եւ սկսել է աշխատել տարբեր պետական գերատեսչություններում: 1976-1980 թթ. Քյոլերն աշխատել է էկոնոմիկայի ֆեդերալ նախարարության ֆունդամենտալ տնտեսագիտության դեպարտամենտում, 1980-1982 թթ.՝ Շլեզվիգ-Հոլշտեյնի հողային վարչությունում, 1982-1990 թթ.՝ ԳԴՀ ֆինանսների նախարարությունում:

1990-1993 թթ. Քյոլերը հաղթահարել է ֆինանսական կառույցների հիերարխիայի մի քանի աստիճան. ֆինանսների նախարարի օգնական արտաքին կապերի գծով, ԳԴՀ կանցլերի անձնական ներկայացուցիչ «մեծ յոթնյակի» հանդիպումների նախապատրաստման եւ Արեւելյան եվրոպայի երկրների հետ բանակցությունների անցկացման գծով, Գերմանիայի ներկայացուցիչ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի ստեղծման շուրջ բանակցություններում, ֆինանսների փոխնախարար եւ Գերմանիայի ներկայացուցիչ Արժույթի եվրոպական միության ստեղծման շուրջ բանակցություններում: 1993 թվականին նա գլխավորել է Գերմանիայի խնայդրամարկղերի միավորումը, որտեղ աշխատել է մինչեւ 1998 կեսը, երբ ԳԴՀ կանցլեր Հելմուտ Կոլի առաջարկությամբ ընտրվել է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի նախագահ:

Քյոլերի կողմնակիցները նշում են նրա հարուստ փորձը, որը ձեռք է բերել Արժույթի եվրոպական միության ձեւավորման շրջանում ԳԴՀ ֆինանսների նախարարի տեղակալի պաշտոնում աշխատելիս: Գերմանիայի մեկնաբանները Քյոլերի գլուխգործոցն են համարում 1991 թվականին կնքված Մաաստրիխտյան պայմանագիրը, որն օրինականացրեց Արժույթի եվրոպական միությունը: Նրա բազմաթիվ ելույթներն այն ժամանակ թույլ տվեցին կտրուկ փոխել հասարակական կարծիքը հօգուտ եվրոպայի միասնական արժույթի՝ եվրոյի կիրառման:

Քյոլերը եվրաբանկը գլխավորեց մեկուկես տարի առաջ, երբ Ռուսաստանում, որն այդ ֆինանսական կառույցի խոշորագույն պարտապանն է, տնտեսական ճգնաժամ սկսվեց: Նոր նախագահն ստիպված էր կարգի բերել գործերն իր տնտեսությունում, որը նա հաջողությամբ գլուխ բերեց: 1999 թվականին Վերակառուցման եւ զարգացման բանկի զուտ եկամուտը կազմեց 41 մլն դոլար այն դեպքում, երբ 1998 թվականն ավարտվել էր 253 մլն դոլար վնասով: Քյոլերը փոխեց բանկի ռազմավարական գերակայությունները՝ կրճատելով խոշոր ենթակառուցվածքային նախագծերի ֆինանսավորումը եւ դիմեց փոքր բիզնեսի օգնությանը:

Հիշեցնենք, որ մարտի վերջին նախատեսվում է Հորս Քյոլերի այցը Հայաստան, Վրաստան եւ Ադրբեջան՝ որպես ՎԶԵԲ-ի նախագահ: Չի բացառվում, որ ՄԱՀ-ի ղեկավարի պաշտոնում ընտրվելու առնչությամբ նրա ծրագրերը փոխվեն:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Ասադ-Քլինթոն գագաթաժողով Ժնեւում

Մի՞թե հաստատվել է վճռորոշ պահը

Բանգլադեշի մայրաքաղաք Դաքայում ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը մարտի 20-ին հայտարարել է, որ առաջիկա կիրակի Ժնեւում հանդիպելու է Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադին: Ընդ որում, նա չի ցանկացել «անհարկի բարձրացնել սպասելիքների մակարդակն այդ հանդիպումից», որը, անտարակույս, նվիրվելու է հունվարի 10-ից առկախված Սիրիա-իսրայելական երկխոսության վերականգնմանը: Եվ չնայած Քլինթոնի զգուշավորությանը, այդ գագաթաժողովի կայացումը Վաշինգտոնի ջանքերի որոշակի հաջողության ցուցանիշ է Դամասկոսի եւ Թել Ավիվի տարաձայնությունները կրճատելու գործում: Այս առումով մարտի 17-ին Սիրիայի պաշտպանության նախարար Մուսթաֆա Թլասը նշել էր, որ Քլինթոնը ջանում է վերսկսել բանակցությունները Սիրիա-իսրայելական եւ լիբանանա-իսրայելական ճավիղներում: Փաստորեն, ուղղակի երկխոսությունը փոխարինվել է ԱՄՆ-ի վարչակազմի եռանդուն միջնորդությամբ հակամարտ կողմերի տեսակետները մերձեցնելու նպատակով:

Սիա թե ինչու քաղաքական դիտորդները լավատեսությամբ ընդունեցին լուրը Ասադ-Քլինթոն հանդիպման մասին, որը երկրորդն է լինելու 1994 թ. Ժնեւյան գագաթաժողովից ի վեր: Բացի այդ, սիրիա-իսրայելական երկխոսության վերջին ընդհատումից հետո տեղի ունեցան ուշագրավ որոշ զարգացումներ, որոնք այսպես թե այնպես նպաստեցին վերոնշյալ հանդիպման հաստատմանը: Այս ծիրում կարեւորվում է Իսրայելի վարչապետ Եհուդ Բարաքի խոստովանությունը, թե իրեն նախորդած Յիցխակ Ռաբինն իրոք ընդունել էր դուրս բերել զորքերը գրավյալ Գոլանի բարձունքից մինչեւ 1967 թ. հունիսի 4-ի սահմանը: Երկրորդ կարեւոր իրադարձությունը իսրայելական կառավարության որոշումն էր մինչեւ 2000 թ. հուլիսը Լիբանանի գրավյալ հողերից համաձայնագրով կամ միակողմանի հեռանալու մասին: Իսկ Վաշինգտոնը լավ գիտակցում է, թե ինչպիսի վտանգավոր հետեւանքներ է ունենալու միակողմանի հեռացումը: Նշանակալից հանգամանք էր նաեւ ԱՄՆ-ի ԱԳ նախարար Մադլեն Օլբրայթի օրերս կատարած ցնցող հայտարարությունը՝ Իրանի հետ իր երկրի հարաբերությունները բարելավելու վերաբերյալ: Գաղտնիք չէ, որ Թեհրանն ազդեցիկ լծակներ ունի միջինարեւելյան հակամարտության մեջ, ուստի ծգտում է անմասն չմնալ հեռախաղության ժամանակաշրջանի օգուտներից:

Հաշվի առնելով այս իրողությունները, ենթադրում ենք, որ Ասադ-Քլինթոն Ժնեւյան գագաթաժողովը կարող է անկյունադարձային նշանակություն ունենալ Միջին Արեւելքում խաղաղ կարգավորման գործընթացի համար: Այլապես՝ նման կարեւորության հանդիպում պարզապես տեղի չէր ունենալու:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆ

«Շեւարդնաձեին չընտրելը հանցագործություն է», ասում է Շեւարդնաձեն

ՓՈՓԻ, 21 ՄԱՐՏ, ՄՆԱՐՔ: «Այսօր Շեւարդնաձեին նախագահի պաշտոնում չընտրելը հանցագործություն է, քանի որ այն, ինչ այսօր կարող եմ անել ես, չի կարող անել ոչ մի այլ թեկնածու», մարտի 20-ին հայտարարել է Վրաստանի նախագահ էդուարդ Շեւարդնաձեն՝ Փոթի քաղաքում ընտրողների առաջ ելույթ ունենալով երկրի շրջաններ կատարած նախընտրական ուղեւորության ընթացքում: «Նախագահի առաջիկա ընտրություններում որոշվում է Վրաստանի ճակատագիրը, եւ սխալ թույլ տալն աններելի կլիներ: Ես գնում եմ Դավիթ Ագմաշենեբելիի եւ Թամար թագուհու ճանապարհով, ես ինձ չեմ համեմատում այդ հանճարների հետ, սակայն համոզված եմ, որ հենց այդ ճանապարհով Վրաստանը կհասնի բարգավաճման», հայտարարել է Շեւարդնաձեն:

Ահաբեկչություն Թբիլիսիում

ԹԲԻԼԻՍԻ, 21 ՄԱՐՏ, ՄՆԱՐՔ: Մարտի 20-ին Թբիլիսիի կենտրոնում՝ Վաժա Պշավելի պողոտայում, ավտոմեքենայի մեջ գտնվող անհայտ անձինք ավտոմատ զենքից կրակ են բացել փողոցում կանգնած մի խումբ երիտասարդների վրա: Այդ հաղորդագրությունը հաստատել են նաեւ ոստիկանության շրջանային բաժանմունքի ներկայացուցիչները: Միջադեպի հետեւանքով ծանր հրազենային վերքերով հանրապետական հիվանդանոց են փոխադրվել 24-ամյա Ալեքսանդր Ջանդիերին եւ 22-ամյա Գեորգի Մծինարիվիլին, որին շատ վիրահատել են: Ներկայումս նրանց կյանքին վտանգ չի սպառնում: Ոստիկանությունը ենթադրում է, որ կրակել են ինքնաձիգից: Բացահայտվել է նաեւ հանցագործների ավտոմեքենայի համարը: Սկսվել է հանցագործների որոնումը:

Քվեբեկցիների անկախության ձգտումը թուլացել է

Քվեբեկցիներից շատերը կարծում էին, թե 2000 թ. խորհրդանշական ուղենիշ կդառնա Կանադայի Ֆրանսալեզու Քվեբեկի նահանգի ինքնիշխանության վերաբերյալ 3-րդ հանրաքվեն անցկացնելու համար: Բայց նրանք հաշվի չէին առել, որ բնակչությունը կարող է հոգնած լինել հանրաքվեներից: Քվեբեկի հանրային հարցումների խոշորագույն հաստատության նախագահ Ժան-Մարկ Լեժենն ափսոսանքով հավաստում է. «Մարդիկ այլեւս չեն հավատում, թե կանադական դաշնապետության բնույթը կարող է փոխվել, թե ինքնիշխանությունը եւ թե դաշնությունը հայտնվել են փակուղում»:

Ներկա վիճակից դուրս գալու համար ոմանք Քվեբեկյան կուսակցության ղեկավարներին առաջարկում են հրաժարվել ինքնիշխանության գաղափարից՝ առավել կարեւորելով Կանադայի կազմում Քվեբեկի ինքնավարության իրավունքների ընդլայնումը: Նահանգի անկախամետ վարչապետ Լյուսիեն Բուշարի նախկին խորհրդական Ժան-Ֆրանսուա Լիզեն մեկն է այդ անձանցից: Բայց Բուշարը մերժում է կուսակցության ուղեգծի փոփոխումը եւ նախընտրում հավատարիմ մնալ սկզբունքներին:

Մինչդեռ Կանադայի վարչապետ Ժան Կրետիենն առիթը բաց չի թողնում քվեբեկցիների տրամադրությունների փոփոխությունը քաղաքական նպատակներով օգտագործելու համար: «Պուեն» հանդեսը տեղեկացնում է, որ Կանադայի խորհրդարանի հանձնաժողովների պալատը շուտով ընդունելու է «Հստակության մասին» տարօրինակ անունը կրող օրինագիծը, որի շնորհիվ Օտտավան իրավունք կստանա գնահատելու անկախության հնարավոր հանրաքվեի օրինականության հարցը եւ Քվեբեկի հետ բանակցելու լոկ քվեարկության համոզիչ արդյունքների դեպքում:

Կարելի էր ենթադրել, թե Օտտավայի այս որոշումը կգայրացնի քվեբեկցիներին: Բայց ոչ: Թեեւ քվեբեկցիները դժգոհ են հանրաքվեի գործընթացին դաշնային իշխանությունների միջամտությունից, նրանք հեռու են բարիկադներ սարքելու մտից: Վերջին երեք տասնամյակներին ինքնիշխանության թեմայով ծավալված քաղաքական քննարկումները պարզապես ծանծաղացրել են նրանց:

Պ. Ք.

Ֆլամանդական ծայրահեղականությունը մտահոգում է բելգիացիներին

Սեպտեմբերին Բելգիայում կայանալիք տեղական ընտրություններից վեց ամիս առաջ երկրի քաղաքական ուժերը հերթական անգամ բանավեճ են ծավալել, թե ինչպիսի ռազմավարություն պետք է որդեգրել ֆլամանդացիների ծայրահեղ աջ շարժման դեմ պայքարելու համար: 10 միլիոնանոց Բելգիայում ֆլամանդացիների թիվը 7 միլիոնից ավելի է: Նրանք բնակվում են գլխավորապես երկրի հյուսիսում՝ Ֆլանդրիայում եւ վերջին տարիներին անջատական հակումներ են դրսեւորում:

Բրյուսելի «Սուար» օրաթերթը հրապարակել է երկրի սոցիալիստ փոխվարչապետ Լորեն Օնկելինքսի խորհրդարանական գրություններից մեկը, որով նախատեսվում է օրենքից դուրս հայտարարել այն կուսակցությունները, որոնք «ակնհայտ բնական վերաբերմունք են հանդես բերում մարդու իրավունքների նկատմամբ»: Արդյոք դա փորձնական քայլ չէ՞ համապատասխան օրինագծի ներկայացումից առաջ: Սակայն, ինչպես նշում է «Էքսպրես» հանդեսը, խորհրդարանում նման օրինագծի ընդունման հավանականությունը շատ փոքր է:

Այն փաստը, որ ֆլամանդացի ծայրահեղ աջերի կամ «Վլաամս բլոկի» գործունեությունը վերսին հայտնվել է երկրի քաղաքական ուժերի ուշադրության կենտրոնում, ֆլամանդացի ծայրահեղականների հաջողության վկայությունն է: Իրոք, նախնական հարցումները ցույց են տալիս, որ առաջիկա ընտրություններում «Վլաամս բլոկը» որոշ քաղաքներում կստանա քվեների ավելի քան 15 տոկոսը, իսկ Անտվերպենում՝ ավելի քան 40 տոկոսը: Պատահական չէ, որ ֆլամանդացի ծայրահեղ աջերը Ֆլանդրիայի անկախության դրոշն են պարզել, իսկ նեղգաղթը երկրի անբարեհաջողության պատճառն են համարում: Ֆլանդրիայի բարգավաճ վիճակը լոկ նպաստում է անջատականների հաջողությանը:

Բելգիայի իշխանությունները երկյուղներ ունեն, որ «Վլաամս բլոկը» կարող է տեղական դաշինքներ կազմել ընդդիմադիր սոցիալ-քրիստոնյաների հետ: Փոխվարչապետ Լորեն Օնկելինքսի խորհրդապահական գրությունը մասամբ նաեւ այդ երկյուղներով է բացատրվում: Երկրում գործող օրենսդրությունն արդեն իսկ ծայրահեղականների դեմ պայքարելու որոշ հնարավորություններ է ընձեռում: Այսպես, 1999 թ. փետրվարին ընդունված օրենքներից մեկով նախատեսվում է պետական հատկացումներից զրկել այն կուսակցություններին, որոնց կարգավիճակն ու գործողությունները հակասում են մարդու իրավունքների եվրոպական հռչակագրին: Մնում է խմբագրել դրա կիրառմանն առնչվող հրամանագրերը: Վերջին տարիների օրենսդրական զինանոցում առկա է նաեւ այնպիսի պատժամիջոց, ինչպիսին է ռասայական ատելության համար դատապարտված անձանց ընտրվելու իրավունքից զրկելը:

Արդ, հարկ կա՞ արդյոք փնտրելու նոր պատժամիջոցներ: Ֆլամանդացիների տարաբնույթ քաղաքական ուժերի բազմաթիվ ներկայացուցիչներ կարողանում են չափավորել «Վլաամս բլոկին» դատափետող վալոնցի, այսինքն ֆրանսախոս գործիչների մոլեգնությունը, հիշեցնելով, որ քաղաքականությունը ոչ այնքան մրցակցին փնովելն է, որքան սեփական ծրագրի առավելությունն ապացուցելը:

Պ. Ք.

Տեմբու ցեղի թագավորը կմասնագիտանա կաթի ոլորտում

Հարավաֆրիկյան Հանրապետության նախկին նախագահ Նելսոն Մանդելան որոշել է, որ իր ծոռը՝ տեմբու ցեղի 36-ամյա թագավոր Բեյելեկայա Դալինդիեբոն պետք է մասնագիտական կրթություն ստանա: Նա ծոռանը բացատրել է, որ անցել են այն ժամանակները, երբ անուսում ցեղապետերը հանգիստ իշխում էին իրենց հպատակների վրա: Արդեն հայտնի է, որ 2001 թ. տեմբուների թագավորը գահը ժամանակավորապես թողնելու է կաթի ոլորտում մասնագիտանալու համար: Մանդելայի միջամտության շնորհիվ ծոռը 1,8 հազար դոլար կրթաթոշակ կստանա: Թագավորի բացակայության ժամանակաշրջանում կգահակալի Նոլունցու թագուհին:

Մադոննայի թանկարժեք տունը

Մադոննան Մայամիում (Ֆլորիդա) վաճառի է հանել իր 10 սենյականոց շքեղ առանձնատունը, որի մակերեսը 2400 քառ. մետր է: Նա հույս ունի տունը վաճառել 8.9 միլիոն դոլարով: Փոփ-աստղն այդ առանձնատունը ձեռք է բերել 1992 թ. ընդամենը 4,9 միլիոնով: Միջերկրածովյան ոճի տունը կառուցված է Բիսքեյնի ծովածոցի ափին: Անցյալ տարվա ամռանը Մադոննան մերժել էր տունը 6 միլիոն դոլարով վաճառելու առաջարկը, որ արել էր հայտնի հեռուստահանդեսներից մեկի հաղորդավարուհի Ռոզի Օ'Դոնելը:

«ԷՔՍՊՐԵՍ»

Մշակույթ

Ազնիվ գինի վեհանշն հոգիների համար

Օգյուս Ռոդենի մտածումները

– Ի՞նչ տարօրինակ մարդ եմ, ասաց ինձ, ուրեմն առ այսօր արվեստը հետաքրքրում է ձեզ... Մեր օրերում հազվագյուտ նախասիրություն:

– Այսօր արվեստագետներն ու նրանց սիրահարները բոլոր կենդանիներ են հիշեցնում: Պատկերացրեք մի մեգաֆաունի կամ դիոլոդոկուսի Փարիզի փողոցներով անցնելիս: Ահա այսպիսի տրավորություն կարող եմ գործել մեր ժամանակակիցների վրա: Մեր ժամանակներում ամեն ոք օգուտ է փնտրում: Նյութապես բարելավելու իր գոյությունը: Գիտությունն ամեն օր նորանոր հնարքներ է որոնում մարդկանց սնելու, հագցնելու, տեղից տեղ փոխադրելու համար, տնտեսական ցածրակարգ արդյունքներ է արտադրում: Հետագորին չափ մեծ թվով մարդկանց հրանցնելու համար կեղծ հաճույքներ: Թեև, ցիրտ է, բերում է նաև իսկական կատարելագործված միջոցներ: բոլոր տեսակի կարիքները հոգալու համար: Սակայն խոսք չի կարող լինել ոգու, մտքի, երազանքի մասին: Արվեստը մեռել է...

...Այս խոսքերը հնչել են 100 տարի առաջ, հետու-հետավոր Ֆրանսիայում, Մեդոնի Վալ-Ֆլորի գյուղակում: Ասողը մեծն Օգյուս Ռոդենն է: Լսողը, գրի առնողը լուսամոլ, գրականագետ եւ արվեստի քննադատ Պոլ Գզելը, որը խնամով հավաքել է «Կամքի վրա փչող Ոգու» գրականագետ, արվեսաբան Յուրի Խաչատրյանի բնորոշումն է: Ռոդենի խոսքերը: Մեծին հատուկ դաման մի ճանապարհ անցած Ռոդենը մարդկությանը թողեց ոչ թե յարություն ու մաղձ, այլ լուսավոր ոգեկերներ ու լուսավոր մտքեր: Առանձնակի սիրով հայերենի թարգմանված այս գիրը («Օգյուս Ռոդեն. Արվեստ. Պոլ Գզելի ժողոված զրույցներ») մեզ են ներկայացնում Հայաստանի ազգային դպրոցական հրատարակչությունը: Թարգմանությունը կատարել է Նվարդ Վարդանյանը, առաջաբանը գրել է Յուրի Խաչատրյանը: Եվ այսօր, երբ շատերին թվում է, թե իրենց դիմոգավերի ժամանակն է, այս գիրը եւս մեկ անգամ գալիս է հիշեցնելու, որ, ոչ, դիմոգավերներ անցել են: Այսօր եւ այսուհետ կան եւ լինելու են ոգու, մտքի, երազանքի ժամանակներ, որպիսիներ մարդկությունը Ֆիդիաս, Միքելանջելո, Լեոնարդոյի, Դանթե, Շեքսպիր ունի: Նաեւ Օգյուս Ռոդեն: Նույնիսկ ամենաածայրահեղ վիճակներում, ամենադաժան ժամանակներում Աստված մեզ օգնական է, ուղարկում է իր մարգարեներին մեր խուլ ականջներին փրկվելու հնարներ ընտրելու, մեր կույր աչքերին լույս կաթեցնելու համար: Նաեւ Օգյուս Ռոդենի միջոցով: Ու եթե ուզում եմ փրկվել՝ փրկվում եմ, եթե ամեն՝ ինչ կորցրել եմ եւ իմներս մեզ դատապարտել անգոյության գիրք չեմ վերցնում մեր ձեռքը, չեմ կարողանում տեսնել «Համբույր» դարձած մարմարը, չեմ կարողանում սիրո խոսքեր ընտրել... Այսպես չէ, այսպես չէ: Մենք կանք, ապրում ենք, սիրում (ընչում), սիրում (հիշում), սիրում (երազում): Այսպես ենք ապրում: Ու մեր ամեն օրը կարողանում ենք տոն դարձնել, որովհետեւ նաեւ հետեւում ենք Պոլ Գզելի եւ Օգյուս Ռոդենի զրույցներին: Ու այս զրույցները սիրո մասին են լինեն Մեդոնում, թե Փարիզում՝ մարմարների դահեստում, Սեւրի մանուֆակտուրայում, թե Բիրոնների կալվածք Սակրե-Կյորում: Ռոդենը միշտ սահմանում է՝ այսպես է նրա արդելու ձեւը: Գզելը գրի է առնում քանդակագործի խոսքը: մեծ գործ է՝ կատարում...

«– Օ՛, սրա ուսերը, որքա՛ն հմայք: Կատարյալ գեղեցկության կոր է... Շատ ծանր է գծանկարը... Բազմիցս փորել ես... Բայց... Ահա, երկրորդ փորձը նույն կինն է: Սա ավելի է մոտ... Մինչդեռ... Բայց նայեք այս մեկի կուրծքը, ի՞նչ սահնչելի կորություն է, համարյա անիրական նրբագեղություն: Իսկ այս մեկի կոնքերը, զմայլելիորեն ալեծեւ են: Եվ որքա՛ն զարմանալի կերպով են մկաններն ամփոփվում արտաքին փափուկ գծերի մեջ: Սրա առջեւ պետք է խոնարհվել...»:

Արվեստի ուժը, հզոր ուժը նրա խորհրդավորության մեջ է: Սա հասկորեն գիտակցել է Ռոդենը. «Կարծում են, թե մենք ապրում ենք միայն մեր զգայարաններով, թե մեզ բավարարում է արտաքին երեւույթների աշխարհը: Մեզ այն երեխաների տեղն են դնում, որոնք աչք շոյող գույներից հարբում են եւ ծեւերի հետ խաղում, ինչպես տիկնիկների հետ... Մեզ վաս են սուզվում է անծայր խավարի մեջ: Եվ նույնիսկ անմիջապես մեր կողքին գտնվող հազարավոր երեւույթներ թաքնված են մեր աչքից, որովհետեւ դեռ պատրաստ չենք դրանք ընկալելու...»:

Որպես գրքի վերջաբան բերված է Օգյուս Ռոդենի հանրահայտ կտակը. «Երիտասարդներ, դուք, որ ցանկանում եք գեղեցկության սպասավորներ լինել, գուցե հաճելի լինի ձեզ այստեղ գտնել մի երկարատեւ փորձի ամփոփումը: Բարեպաշտորեն սիրեք ձեզ նախորդած վարպետներին: Խոնարհվեք Ֆիդիասի եւ Միքելանջելոյի առջեւ: Հիացեք մեկի աստվածային անխոովությամբ, մյուսի մոլեգին տագնապով: Հիացմունքը վեհանձն հոգիների համար ազնիվ գինի է... Արվեստը նաեւ անկեղծության հրաշալի դաս է: Իսկական արվեստագետը միշտ արտահայտում է մտածածը՝ հաստատված նախապաշարումներին բախվելու վտանգին ենթարկվելով: Այսպիսով, իր նմաններին սովորեցնում է անկեղծություն: Ուրեմն պատկերացրեք, ինչ հրաշալի առաջընթացներ կարող էին միանգամից իրականանալ, եթե բացարձակ ճշմարտությունն իշխեր մարդկանց մեջ: Ա՛խ, որքան արագ կազատվեր հասարակությունը մոլորություններից ու այլանդակությունից, եթե խոստովաներ, եւ ինչպիսի՞ արագությամբ մեր երկիրը կդառնար դրախտ...»:

Հայաստանի ազգային պատկերասրահի «Սարգիս Խաչենց» հրատարակչության ներկայացրած այս նոր գիրքն իսկապես հրաշալի նվեր է արվեստի ու արվեստասեր մարդկանց:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Երբ բացվում է վարագույրը

Հովհաննես Աղանացու ցուցահանդեսը

Գեղանկարիչ Հովհաննես Մեծ Գեւորգյանը ստեղծագործողի իր աշխարհընկալումն արտահայտում է աբստրակտ արվեստի գունային-պլաստիկ սկզբունքներով, որի խորհրդավորությունը թերեւս սկզբնաղբյուր է վարագուրվածության մեջ է:

Ստեղծագործողին բնորոշ որոնում ու նաեւ մեղմ երազայնություն կա նկարչի կտավներում՝ հագեցած տաք, արեւային կենսաբար էներգիայով: Աշխարհն ու մարդուն մեկնելու ինքնատիպ լուծումներ է տալիս երիտասարդ արվեստագետը՝ գունագծային հետաքրքիր ու տարօրինակ նրբերանգներ հաղորդելով հաճախ անձայն թվացող երեւույթներին ու իրերին:

Նկարչի հայացքը մշտապ լույսին է ուղղված, սիրո ու երազախառն գույներով բացված նրա ներաշխարհը գունեղ է՝ սնված արեւելյան տաք ու լիաբաս գույներից ու ձայներից, պարուրված նրբահյուս հեքիաթային շղարշով («Ճայը», «Արեւելյան պատահիկներ», «Աշնանային սերենադ», «Ճաղոնական տեսարան», «Լիված արեւի երազը», «Ճախրանք»):

Հովհաննես Գեւորգյանը մասնակցել է Հայաստանի նկարիչների միության, Խ. Աբովյանի տուն-թանգարանում, Շուշիում կազմակերպված ցուցահանդեսներին (1993), Թեհրանում (1995), Երեւանի կամերային թատրոնի սրահում: Իրեւ «Մուրց» անվանումով նկարիչների անկախ խմբի հիմնադիր անդամ՝ ազնվորեն եւ լավագույնս ծառայում է ազգային մշակույթին:

Ցուցահանդեսը բացվեց երեկ մշակույթի եւ երիտասարդության նախարարությունում՝ արդեն մեկ տարի գործող «Մեկ ազգ, մեկ մշակույթ» խորագրի ներքո: Սա այս տարվա առաջին միջոցառումն էր: Ցուցահանդեսի բացմանը ելույթ ունեցան մշակույթի զարգացման բարեգործական հիմնադրամի տնօրեն Սամվել Մեսրոպյանը եւ սփյուռքի հետ կապերի վարչության պետ Սպարտակ Ղարաբաղցյանը, որոնք ներկայացրին նկարչի աշխատանքների հիմնական ուղղվածությունն ու բնույթը՝ Մեծ Գեւորգյանի նկարչությունը ներկայացնելով որպես լույսի հեղեղ:

ՄԵԼՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԵՈՒՅԺ

Մահացավ Ցիցիլիա Բրուչյանը

Կյանքից հեռացավ արվեստի վաստակավոր գործիչ Ցիցիլիա Բրուչյանը: Ճանաչված երաժշտագետը երկար ժամանակ համագործակցել է «Ազգ»-ին ոչ միայն երաժշտագիտական, այլեւ ազգային քաղաքական եւ հասարակական բնույթի հոդվածներով: Գիտնական, հասարակական բարձր գիտակցականության տեր արվեստաբանը հրատարակել է բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցից ոմանք ունեն հանրագիտական բնույթ, ինչպես՝ «Շարա Տալյան», «Արամ Տեր-Հովհաննիսյան», «Հայրենաբաղձ հնչյուններ»: Առավել լուրջ գիտական արժեք են ներկայացնում Ցիցիլիա Բրուչյանի «Սփյուռքի հայ երաժիշտները» եւ «Կոմիտաս» աշխատությունները:

Արվեստի նվիրյալի կորուստը ցավ է ոչ միայն նրա հարազատների, այլեւ մեզ՝ «Ազգ»-ի աշխատակիցների համար:

Օսկար 2000

Սկիզբը նախորդ համարում

3. Տաղանդավոր Պր. Ռիփլին (The Talented Mr. Ripley)

Ռեժիսոր՝ Էնթոնի Մինգելլա

Դերերում՝ Մեթ Դեյմոն, Գվինեթ Փելթրոու, Ջյուդ Լո, Քեյթ Բլանչեթ

Թեկնածության կարգերը (թվով՝ 5)՝ լավագույն դերասան երկրորդական դերում (Ջյուդ Լո), բեմադրող ռեժիսոր, ադապտացված սցենար, հագուստի դիզայն, երաժշտություն:

Սյուժեն. Ջյուդ Լոյի մարմնավորած կերպարը՝ փիլեբոյ Դիկի Գրինֆիլդը, այնքան հմայիչ է, որ գլխավոր հերոսը՝ տաղանդավոր պարոն Ռիփլին, փորձում է ամեն ինչում ընդօրինակել նրան:

4. Մագնոլիա (Magnolia)

Ռեժիսոր՝ Փոլ Թոմաս Անդերսոն

Դերերում՝ Ջուլիանա Մուր, Ջեյսըն Ռոբարդս, Թոմ Քրուզ

Թեկնածության կարգերը (թվով՝ 4)՝ լավագույն դերասանուհի գլխավոր դերում (Ջուլիանա Մուր), դերասան երկրորդական դերում (Թոմ Քրուզ), սցենար (Փոլ Թոմաս Անդերսոն), երգ ֆիլմի համար:

Սյուժեն. երեք ժամ տեւող ֆիլմ ընտանեկան հարաբերությունների մասին, որի ընթացքում կամաց-կամաց մանրամասնություններ են բացահայտվում 9 հերոսների կյանքից: Գլխավոր հերոսը հեռուստատեսային մահամերձ պրոդյուսեր է, որը տանջվում է կյանքում իր գործած սխալների մտքից:

Լրացուցիչ փաստեր. Թոմ Քրուզն արդեն ստացել է Ոսկե Գլոբուս մրցանակ այս ֆիլմում՝ Թի Ջեյ Մեկկի դերակատարման համար: Քսանիններորդ Փոլ Թոմաս Անդերսոնը ֆիլմի եւ՛ սցենարիստն է եւ՛ ռեժիսորը: Սա նրա երրորդ աշխատանքն է: Նախորդը՝ «Գիշերները բուգի ոճով» ֆիլմը 97 թ. Օսկարի թեկնածու էր լավագույն սցենարի համար:

Բացի վերոհիշյալ ֆիլմերից, 6-ական թեկնածություն ունեն «Սայդր հաուս ռուլզ» (ռեժ.՝ Լասսե Հալստրեմ) եւ «Ինսայդեր» (դեր.՝ Ալ Պաչինո) ֆիլմերը: Հինգ անվանակարգում նշված է «Խառնաշփոթ» ֆիլմի անունը, 4-ում՝ «Մատրից» (դեր.՝ Կիանու Ռիվզ), 3-ում՝ «Աստղային պատերազմներ. դրվագ 1», «Կանաչ մղոն» (ռեժ. Ֆրենկ Դարաբոնտ, դեր.՝ Թոմ Հենֆս, նկարահանված է Սթիվն Քինգի նովելի հիման վրա) եւ «Քնկոտ հովիտը» (ռեժ.՝ Թիմ Բարթն, դեր. Ջոնի Դեփ) ֆիլմերի անունները: Թեկնածուների շարքերում նշված են նաեւ «Աննան եւ թագավորը» (դեր.՝ Ջոդի Ֆոստեր), «Կռվի ակումբը» (դեր.՝ Բրեդ Փիթ, էդուարդ Նորտոն), «Տիտոս» (դեր. էնթոնի Հոպկինս, Ջեսիկա Լենգ), «Պաստահողմ» (դեր.՝ Դենզել Վաշինգտոն) եւ «Օսթին Փաուերզ-2. Լրտեսը, որ հետաքնդում էր ինձ» (դեր.՝ Մայք Մայերզ) ֆիլմերը եւ հետեւյալ աստղերը. Մայքլ Քեյն, Շոն Փեն, Մերիլ Սթրիփ եւ Դենզել Վաշինգտոն:

Հետաքրքիր է, որ կինոակադեմիան անտեսել է անցյալ տարվա մի շարք սիրված ֆիլմեր, որոնցից են «Իններորդ դարպասը», «Փախչող հարսնացուն», «Աշխարհն էլ բպվական չէ», «Նոտինգ Հիլլ», «Բլերի վհուկը», «Մարդը լուսնի վրա», «Դոգմա», «Լայն փակված աչքեր», «Աշխարհի վերջը», «Վերլուծիր»:

Պատրաստեց ԱՐԹՈՒՐ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

ԲԵՅՐՈՒԹ

Նոր ֆիլմ Փարաջանովի մասին

Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտական բաժանմունքի կազմակերպությամբ մարտի 13-ին համալսարանի սրահում կայացել է «Մաեստրո Սերգեյ Փարաջանով» 42 րոպեանոց ֆրանսերեն վավերագրական ֆիլմի պրեմիերան: Ֆիլմի հեղինակն ու ռեժիսորն է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի 1994 թ. շրջանավարտ, լիբանանահայ Գասպար Հ. Տերտերյանը:

«Մաեստրո Սերգեյ Փարաջանով» ֆիլմը 32-ամյա Գ. Տերտերյանի առաջին ֆիլմն է իր ինստիտուտն ավարտելուց հետո:

Միջոցառման սկզբի իր ելույթում, Հայկազյան համալսարանի հայագիտական բաժանմունքի վարիչ, դոկտ. Արա Սանճյանը հայտնել է, որ ֆիլմն ամբողջությամբ իրագործվել է Գ. Տերտերյանի անձնական միջոցներով: Սանճյանը հատուկ նշել է, որ այս ֆիլմն առաջացուցում է, որ Փարաջանովի նկատմամբ հետաքրքրությունը չի նվազում նրա մահից նույնիսկ մեկ տասնամյակ հետո:

Իր խոսքում ֆիլմի հեղինակն ասել է, թե ֆիլմը հինգ տարվա աշխատանքի արդյունք է՝ հիմնված երեւանում ուսման տարիներին իր կատարած նկարահանումների ու հարցազրույցների վրա:

Ֆիլմը վերլուծում է Փարաջանովի ստեղծագործական աշխարհը: Նրանում օգտագործված են կադրեր Փարաջանովի բեմադրած չորս ֆիլմերից, նրա ուղեւորությունը գնացքով Թբիլիսիից Երեւան 1990 թ. մահից առաջ, հարցազրույցներ Փարաջանովի գործընկերներից Ալբերտ Յավուրյանի, Գարեգին Զաքոյանի, Միքայել Սամբոլցյանի, Ստեփան Անդրանիկյանի, Զավեն Սարգսյանի, Տիգրան Մանսուրյանի, Յուրի Սայադյանի եւ Յուրի Հարությունյանի հետ: Ֆիլմն ավարտվում է Փարաջանովի «Խոստովանություն» անավարտ ֆիլմից վերցրած կադրերով ու Երեւանի պանթեոնում նրա գերեզմանի ցուցադրումով: Այս բոլորը Գասպար Հ. Տերտերյանը կատարել է արվեստագետի նուրբ ճաշակով:

Լիբանանում, ուր կինոարվեստը թույլ է զարգացած, «Մաեստրո Սերգեյ Փարաջանով» ֆիլմն ինքնին երեւույթ է: Հայ մեծանուն կինոռեժիսորի արվեստն օտարներին ծանոթացնելու նպատակով Գասպար Հ. Տերտերյանը ֆիլմի լեզու է ընտրել ֆրանսերենը:

Պրեմիերան արժանացել է ներկաների բարձր գնահատականին:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇՅԵՆՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

Խաղացանկ

Ֆուտբոլի 2000 թ. Հայաստանի առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի

Մարտի 25-ին կմեկնարկի Հայաստանի հերթական 9-րդ առաջնությունը: Երկրի չեմպիոնի կոչման համար պայքար կմղեն ութ թիմեր՝ Գյումրիի «Շիրակը», Արարատի «Արմավիրը», Երեւանի «Արարատը», «Զվարթնոցը», «Կիլիկիան», «Դինամոն», Աբովյանի «Միկան» եւ Կապանի «Լեռնագործը»:

Բարձրագույն խմբի մրցաշարը կանցկացվի չորս շրջանով, եւ ամենաշատ միավոր հավաքած թիմը կհռչակվի չեմպիոն: Միավորների հավասարության դեպքում կնշանակվի լրացուցիչ խաղ: Բարձրագույն խմբում 8-րդ տեղը գրավող թիմը կտեղափոխվի առաջին խումբ, իսկ 7-րդ տեղ գրավողն անցումային խաղ կանցկացնի առաջին խմբում երկրորդ տեղը գրաված թիմի հետ:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

18-19 մարտի
«Անկախություն» գավաթի
1/8 եզրափակիչի առաջին խաղեր

1-ին տուր
25 մարտ (շաբաթ)
1. «Շիրակ»-«Լեռնագործ» ժ. 15:00
2. «Արարատ»-«Կիլիկիա» ժ. 16:00
3. «Արմավիր»-«Միկա» ժ. 16:00
4. «Զվարթնոց»-«Դինամո» ժ. 16:00

29-30 մարտի
«Անկախություն» գավաթի
1/8 եզրափակիչի պատասխան խաղեր

2-րդ տուր
4 ապրիլի (երեքշաբթի)
5. «Լեռնագործ»-«Դինամո» ժ. 15:00
6. «Միկա»-«Զվարթնոց» ժ. 16:00
7. «Կիլիկիա»-«Արմավիր» ժ. 16:00
8. «Շիրակ»-«Արարատ» ժ. 15:00

8-9 ապրիլի
«Անկախություն» գավաթի
1/4 եզրափակիչի առաջին խաղեր

3-րդ տուր
14 ապրիլի (ուրբաթ)
9. «Արարատ»-«Լեռնագործ» ժ. 16:00
10. «Արմավիր»-«Շիրակ» ժ. 16:00
11. «Զվարթնոց»-«Կիլիկիա» ժ. 16:00
12. «Դինամո»-«Միկա» ժ. 16:00

18-19 ապրիլի
«Անկախություն» գավաթի
1/4 եզրափակիչի պատասխան խաղեր

4-րդ տուր
23 ապրիլի (կիրակի)
13. «Լեռնագործ»-«Միկա» ժ. 16:00
14. «Կիլիկիա»-«Դինամո» ժ. 16:00
15. «Շիրակ»-«Զվարթնոց» ժ. 16:00
16. «Արարատ»-«Արմավիր» ժ. 16:00

5-րդ տուր
29 ապրիլի (շաբաթ)
17. «Արմավիր»-«Լեռնագործ» ժ. 16:00
18. «Զվարթնոց»-«Արարատ» ժ. 16:00
19. «Դինամո»-«Շիրակ» ժ. 16:00
20. «Միկա»-«Կիլիկիա» ժ. 16:00

3-4 մայիսի
«Անկախություն» գավաթի
1/2 եզրափակիչի առաջին խաղեր

6-րդ տուր
9 մայիսի (երեքշաբթի)
21. «Լեռնագործ»-«Կիլիկիա» ժ. 16:00
22. «Շիրակ»-«Միկա» ժ. 16:00
23. «Արարատ»-«Դինամո» ժ. 17:00
24. «Արմավիր»-«Զվարթնոց» ժ. 17:00

13-14 մայիսի
«Անկախություն» գավաթի
1/2 եզրափակիչի պատասխան խաղեր

7-րդ տուր
18 մայիսի (հինգշաբթի)
25. «Զվարթնոց»-«Լեռնագործ» ժ. 18:00
26. «Դինամո»-«Արմավիր» ժ. 18:00
27. «Միկա»-«Արարատ» ժ. 18:00
28. «Կիլիկիա»-«Շիրակ» ժ. 18:00

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

8-րդ տուր
23 մայիսի (երեքշաբթի)
29. «Լեռնագործ»-«Շիրակ» ժ. 17:00
30. «Կիլիկիա»-«Արարատ» ժ. 18:00
31. «Միկա»-«Արմավիր» ժ. 18:00
32. «Դինամո»-«Զվարթնոց» ժ. 18:00

27 մայիսի (շաբաթ)
«Անկախություն» գավաթի
եզրափակիչ խաղ

9-րդ տուր
31 մայիսի (չորեքշաբթի)
33. «Դինամո»-«Լեռնագործ» ժ. 18:00
34. «Զվարթնոց»-«Միկա» ժ. 18:00
35. «Արմավիր»-«Կիլիկիա» ժ. 18:00
36. «Արարատ»-«Շիրակ» ժ. 18:00

3-4 հունիսի
Պահեստային օրեր

10-րդ տուր
7 հունիսի (չորեքշաբթի)
37. «Լեռնագործ»-«Արարատ» ժ. 18:00
38. «Շիրակ»-«Արմավիր» ժ. 18:00
39. «Կիլիկիա»-«Զվարթնոց» ժ. 18:00
40. «Միկա»-«Դինամո» ժ. 18:00

11-րդ տուր
13 հունիսի (երեքշաբթի)
41. «Միկա»-«Լեռնագործ» ժ. 18:00
42. «Դինամո»-«Կիլիկիա» ժ. 18:00
43. «Զվարթնոց»-«Շիրակ» ժ. 18:00
44. «Արմավիր»-«Արարատ» ժ. 18:00

17-18 հունիսի
«Ինտերսոտո» գավաթի խաղեր

12-րդ տուր
21 հունիսի (չորեքշաբթի)
45. «Լեռնագործ»-«Արմավիր» ժ. 18:00
46. «Արարատ»-«Զվարթնոց» ժ. 18:00
47. «Շիրակ»-«Դինամո» ժ. 18:00
48. «Կիլիկիա»-«Միկա» ժ. 18:00

24-25 հունիսի
«Ինտերսոտո» գավաթի խաղեր

13-րդ տուր
29 հունիսի (հինգշաբթի)
49. «Կիլիկիա»-«Լեռնագործ» ժ. 18:00
50. «Միկա»-«Շիրակ» ժ. 18:00
51. «Դինամո»-«Արարատ» ժ. 18:00
52. «Զվարթնոց»-«Արմավիր» ժ. 18:00

1-2 հուլիսի
«Ինտերսոտո» գավաթի խաղեր

14-րդ տուր
5 հուլիսի (չորեքշաբթի)
53. «Լեռնագործ»-«Զվարթնոց» ժ. 18:00
54. «Արմավիր»-«Դինամո» ժ. 19:00
55. «Արարատ»-«Միկա» ժ. 19:00
56. «Շիրակ»-«Կիլիկիա» ժ. 19:00

8-9 հուլիսի
«Ինտերսոտո» գավաթի խաղեր

Պահեստային օրեր

12 հուլիսի (չորեքշաբթի)
Չեմպիոնների լիգայի
նախնական փուլի խաղեր

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

15-րդ տուր
15 հուլիսի (շաբաթ)
57. «Շիրակ»-«Լեռնագործ» ժ. 18:00
58. «Արարատ»-«Կիլիկիա» ժ. 19:00
59. «Արմավիր»-«Միկա» ժ. 19:00
60. «Զվարթնոց»-«Դինամո» ժ. 19:00

19 հուլիսի (չորեքշաբթի)
Չեմպիոնների լիգայի
նախնական փուլի խաղեր

16-րդ տուր
23 հուլիսի (կիրակի)
61. «Լեռնագործ»-«Դինամո» ժ. 18:00
62. «Միկա»-«Զվարթնոց» ժ. 19:00
63. «Կիլիկիա»-«Արմավիր» ժ. 19:00
64. «Շիրակ»-«Արարատ» ժ. 18:00

26 հուլիսի
Չեմպիոնների լիգայի
նախնական փուլի խաղեր

17-րդ տուր
29 հուլիսի (շաբաթ)
65. «Արարատ»-«Լեռնագործ» ժ. 19:00
66. «Արմավիր»-«Շիրակ» ժ. 19:00
67. «Զվարթնոց»-«Կիլիկիա» ժ. 19:00
68. «Դինամո»-«Միկա» ժ. 19:00

2 օգոստոսի (չորեքշաբթի)
Չեմպիոնների լիգայի
նախնական փուլի խաղեր

3-4 օգոստոսի
Պահեստային օրեր

10 օգոստոսի (հինգշաբթի)
ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության
նախնական փուլի խաղեր

15-17 օգոստոսի
Պահեստային օրեր

24 օգոստոսի
ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության
նախնական փուլի խաղեր

18-րդ տուր
28 օգոստոսի (երկուշաբթի)
69. «Լեռնագործ»-«Միկա» ժ. 18:00
70. «Կիլիկիա»-«Դինամո» ժ. 19:00
71. «Շիրակ»-«Զվարթնոց» ժ. 18:00
72. «Արարատ»-«Արմավիր» ժ. 19:00

2-3 սեպտեմբերի
2002 թ. ափխազիի առաջնության
ընտրական խաղեր

19-րդ տուր
7 սեպտեմբերի (հինգշաբթի)
73. «Արմավիր»-«Լեռնագործ» ժ. 19:00
74. «Զվարթնոց»-«Արարատ» ժ. 19:00
75. «Դինամո»-«Շիրակ» ժ. 19:00
76. «Միկա»-«Կիլիկիա» ժ. 19:00

20-րդ տուր
12 սեպտեմբերի (երեքշաբթի)
77. «Լեռնագործ»-«Կիլիկիա» ժ. 18:00
78. «Շիրակ»-«Միկա» ժ. 18:00
79. «Արարատ»-«Դինամո» ժ. 19:00
80. «Արմավիր»-«Զվարթնոց» ժ. 19:00

14 սեպտեմբերի (հինգշաբթի)
ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության
նախնական փուլի խաղեր

15–17 սեպտեմբերի
Պահեստային օրեր

21-րդ տուր
21 սեպտեմբերի (հինգշաբթի)
81. «Զվարթնոց»-«Լեռնագործ» ժ. 18:00
82. «Դինամո»-«Արմավիր» ժ. 18:00
83. «Միկա»-«Արարատ» ժ. 18:00
84. «Կիլիկիա»-«Շիրակ» ժ. 18:00

25 սեպտեմբերի (երկուշաբթի)
Պահեստային օր

28 սեպտեմբերի (հինգշաբթի)
ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության
նախնական փուլի խաղեր

ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

22-րդ տուր
30 սեպտեմբերի (շաբաթ)
85. «Լեռնագործ»-«Շիրակ» ժ. 16:00
86. «Կիլիկիա»-«Արարատ» ժ. 17:00
87. «Միկա»-«Արմավիր» ժ. 17:00
88. «Դինամո»-«Զվարթնոց» ժ. 17:00

3–4 հոկտեմբերի
Պահեստային օրեր

7–8, 10–11 հոկտեմբերի
2002 թ. ափխազիի առաջնության
ընտրական խաղեր

23-րդ տուր
15 հոկտեմբերի (կիրակի)
89. «Դինամո»-«Լեռնագործ» ժ. 16:00
90. «Զվարթնոց»-«Միկա» ժ. 16:00
91. «Արմավիր»-«Կիլիկիա» ժ. 16:00
92. «Արարատ»-«Շիրակ» ժ. 16:00

24-րդ տուր
22 հոկտեմբերի (կիրակի)
93. «Լեռնագործ»-«Արարատ» ժ. 15:00
94. «Շիրակ»-«Արմավիր» ժ. 15:00
95. «Կիլիկիա»-«Զվարթնոց» ժ. 16:00
96. «Միկա»-«Դինամո» ժ. 16:00

25–26 հոկտեմբերի
Պահեստային օրեր

25-րդ տուր
29 հոկտեմբերի (կիրակի)
97. «Միկա»-«Լեռնագործ» ժ. 15:00
98. «Դինամո»-«Կիլիկիա» ժ. 15:00
99. «Զվարթնոց»-«Շիրակ» ժ. 15:00
100. «Արմավիր»-«Արարատ» ժ. 15:00

26-րդ տուր
4 նոյեմբերի (շաբաթ)
101. «Լեռնագործ»-«Արմավիր» ժ. 14:00
102. «Արարատ»-«Զվարթնոց» ժ. 14:00
103. «Շիրակ»-«Դինամո» ժ. 14:00
104. «Կիլիկիա»-«Միկա» ժ. 14:00

7–8 նոյեմբերի
Պահեստային օրեր

27-րդ տուր
11 նոյեմբերի (շաբաթ)
105. «Կիլիկիա»-«Լեռնագործ» ժ. 14:00
106. «Միկա»-«Շիրակ» ժ. 14:00
107. «Դինամո»-«Արարատ» ժ. 14:00
108. «Զվարթնոց»-«Արմավիր» ժ. 14:00

28-րդ տուր
16 նոյեմբերի (հինգշաբթի)
109. «Լեռնագործ»-«Զվարթնոց» ժ. 14:00
110. «Արմավիր»-«Դինամո» ժ. 14:00
111. «Արարատ»-«Միկա» ժ. 14:00
112. «Շիրակ»-«Կիլիկիա» ժ. 14:00

19 նոյեմբերի (կիրակի)
Հ. Տոնոյանի անվան Վերնագավաթի
խաղարկության խաղ

20 նոյեմբերի (երկուշաբթի)
Անցումային հանդիպում
Ք. Արմավիրում

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց
1. Բարելոն: 2. Նեղեր: 3. Գեղամ: 4. Հարսանիք: 6. Նոպաակ: 7. Աղարան: 10. Սողանք: 11. Դուրյան: 12. Պատանդ: 16. Տիգրանյան: 17. Կազիրանգա: 19. Յաթաղան: 20. Սաղայել: 25. Գրաբար: 26. Կանգուն: 27. Նար-Դոս: 29. Տակեսիա: 31. Կրամարով: 32. Հուրյան: 33. Վազարի: 37. Մարկո: 38. Գարուն:

Հորիզոնական
5. Քամելեոն: 7. Ավեստան: 8. Գեսածի: 9. Ամանակ: 13. Ալբոմ: 14. Մանսուրյան: 15. Գաոնի: 18. Նկարիչ: 21. Տականք: 22. Կախաղան: 23. Մալյան: 24. Սամարա: 28. Հարակեզ: 29. Տրական: 30. Ազարակ: 34. Օկսան: 35. Սունդուկյան: 36. Գոհար: 39. Տալյան: 40. Հրաման: 41. Ստացական: 42. Իգումենով:



Ուղղահայաց
1. Օձի տեսակ: 2. Չիերի վազք, սնգսնգոց: 3. Կանացի անուն: 4. Համաստեղություն երկնի հարավային կիսագնդում: 7. Պետություն Աֆրիկայի հյուսիս-արեւելքում: 8. Սիբիրահայ դերասանուհի: 9. Ասորեստանի թագավոր: 13. Լատինական Ամերիկայի երկրներից: 14. «Չախու» պատմվածքի հերոսակը: 17. Գյուղ Մասիսի սոռոռում, որն ավերվել է երկրաշարժից: 18. Հոների արքան եւ առաջնորդը: 19. Բուսական ծագում ունեցող հանածո խեժ: 20. Մերձավոր Արեւելքում եւ Կովկասում տարածված լարային գործիք: 23. «Ավինյոնի աղջիկները» կտավի հեղինակը: 25. Ծերենցի պատմավեպը «... Թ դարու»: 26. Ռուս բնանկարիչ: 30. Ֆրանսիացի նկարիչ, քանդակագործ, հարել է կուբիզմին: 31. Քաղցրավենիք: 33. Մահճակալի գլխավերեւի մասը: 34. Գրենական պիտույք:

Հորիզոնական
5. Ֆրանսիացի մատերիալիստ փիլիսոփա: 6. Լեռնաշղթա Չինաստանում: 10. Ռուսական լարային կսմիթավոր նվագարան: 11. Գետ Ֆրանսիայում: 12. Ս. Զորյանի մշակած «Քայլե մարդը» հեքիաթի հերոսը: 15. Դաշտավայր Հայաստանում: 16. Գետ Գերմանիայում: 18. Չհասած, խակ խաղող: 19. Հանգած հրաբխային լեռնազանգված Հայկական լեռնաշխարհում: 21. Խորհրդային սերիայի երկրի արհեստական արբանյակ: 22. Հայկական ժողովրդական հեքիաթի հերոսուհի: 24. Գիտական դրույթ կամ աշխատություն, որը ներկայացնում են պաշտպանության: 27. Ոգելից խմիչք: 28. Ժամանակի միավոր: 29. Այն վայրը, որտեղ տեղակայված են էլեկտրահոսանքի լարվածությունը փոխարկող տեխնիկական սարքավորումները: 32. Վարչական միավորի անվանում Իրանում: 33. Բանաստեղծության կառուցման ձեւ: 35. Հայոց թագավոր Բագրատունիների հարստությունից: 36. «Եվրոպայի առեւանգումը» կտավի հեղինակը: 37. Քաղաք Կանադայում:

Կազմեց Է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Նիկոլայ Ակսենենկոն իր ծննդյան օրը տոնեց Տիրան արքեպիսկոպոսի հետ

Մարտի 26-ին նախագահականին զուգընթաց Ռուսաստանի որոշ մարզերում կանցկացվեն նաեւ նահանգապետերի ընտրություններ: Այդպես կլինի եւ Կիրովի նահանգում, ուր ներկա նահանգապետ Վլադիմիր Սերգիենկոն նորից առաջադրել է իր թեկնածությունը: Նրա հավերով օրերս Կիրով էր ժամանել Մոսկվայի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Տիրան արք. Կյուրեղյանը: Տիրան արքեպիսկոպոսի այս ոչ միակ այցը Կիրովի նահանգ դարձավ ամենահետաքրքրականներից մեկը:

Հայկական համայնքը Տիրան արքեպիսկոպոսի հետ հանդիպման ընթացքում որոշում ընդունեց քվեարկել Վ. Պուտինի օգտին որպես ՌԴ նախագահի: Հետաքրքիր է, որ դա արվեց, արքեպիսկոպոսի խոսքերով, «Կարմիր նահանգապետ Սերգիենկոյի համաձայնությամբ», որը նույնպես ներկա էր հանդիպմանը:

Դատելով ամեն ինչից, Տիրան արքազանն այնքան համոզիչ էր եւ այնպես դուր եկավ նահանգապետին, որ մնացած ողջ ժամանակը նրանք անցկացրին միասին: ընդունեցին Մոսկվայից ժամանած հյուրերին նախարար եւ նախկին փոխվարչապետ Նիկոլայ Ակսենենկոյին եւ կենսաթոշակային ֆոնդի ղեկավար Զուրաբովին: Արքազանը Մոսկվա վերադարձավ ինքնաթիռով Նիկոլայ Ակսենենկոյի ընկերակցությամբ: Ի դեմ, ինչպես պարզվեց, այդ օրը վերջինս նշում էր իր ծննդյան տոնը: Կենաց բաժակ բարձրացնելով Տիրան արք. Կյուրեղյանը համեմատեց Ակսենենկոյին (որն իր կյանքի այդպիսի օրն աշխատանքային մթնոլորտում է անցկացնում, ոչ թե մտերիմների շրջանում, Մոսկվայում) Անաստաս Միկոյանի հետ: Լինելով ԽՍՀՄ-ի Նախարարների խորհրդի նախագահ, Կարիբյան ճգնաժամի օրերին Միկոյանը գտնվում էր Կուբայում եւ նույնիսկ իր կնոջ թաղման օրը չվերադարձավ Մոսկվա: Ճիշտ է, նշեց Տիրան արքեպիսկոպոսը, այստեղ համեմատությունը տեղին է պետական ատաղձագործի իր գործի պատասխանատվության լոկ մի մասով, իսկ առիթը ներկա դեպքում նշանակալիորեն ավելի ուրախ է:

Ականատեսների հավաստմամբ Տիրան արքազանի խոսքերը դուր եկան պրն Ակսենենկոյին: Ավելին, Արքազանի հետ վերադառնալով, վերջինից հատուկ իր համար պատրաստված նվեր ստացավ օդանավակայանում:

Արդեն մի քանի ժամ անց Տիրան արքեպիսկոպոսը ելույթ էր ունենում իր հայրենակիցների առջեւ: հայտնի նկարիչ Դմիտրի Նալբանդյանի տուն-թանգարանում, որը երկու քայլ է հեռու մոսկովյան քաղաքապետարանից, Տվերյան փողոցի շենքերից մեկում (այդ նույն շենքում է աղում տաղանդավոր Լիսիցյան քույրերից մեկը՝ Ռուզաննան): Նալբանդյանի նախկին արվեստանոցում մոսկովյան համայնքի «Արարատ» ակումբը կազմակերպել էր համերգ՝ նվիրված Կոմիտասի 130-ամյակին: Ինչպես հայտնի է, իր նկարներից մեկում Դմիտրի Արշակովիչ (Ռուսաստանում հայտնի որպես Դմիտրի Արկադեւիչ) Նալբանդյանը պատկերել է Կոմիտասին, որի վրա պատկերված են երկու մեծանուն հայրենակիցները՝ Կոմիտասը եւ Հովհաննես Թումանյանը (երկուսն էլ ծնվել են 1869 թվին, մեկը Արեւմտյան, մյուսը Արեւելյան Հայաստանում), այսօր ցուցադրված են Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում:

Համերգին ներկա էր նաեւ նկարչի քույրն ու ժառանգորդուհին՝ Անժելա Նալբանդյանը: Նա մյուսների հետ հետաքրքրությամբ եւ հաճույքով լսում էր Կոմիտասի ստեղծագործությունները Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանի պրոֆեսոր Մայա Ղամբարյանի եւ ուսանողների կատարմամբ: Հետաքրքիր է կարո՞ղ էր պատկերացնել Կոմիտասը, որ մեկուկես դար անց իր երգերը հուզմունքով կկատարեն ռուս վոկալիստները (ի դեմ, երգում էին հայկական), կամ որ իր մի քանի ստեղծագործությունները կինչեն կորեական ծագմամբ ուսանողի շրթունքներից:

ԼՈՒՍԻԿ ՂԱՐԻԿԱՍՅԱՆ
Մոսկվա

ԼՂՀ

Կառավարությունը հավանություն տվեց բյուջեի նախագծին

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մարտի 21-ի ԼՂՀ կառավարության հերթական նիստում կառավարության հավանությանն արժանացավ ԼՂՀ 2000 թ. պետբյուջեի նախագիծը: Ըստ ԼՂՀ ֆինանսների նախարար Սպարտակ Թեւոսյանի, կառավարությունը դեռեւս անցյալ տարվա սեպտեմբերին է ձեռնամուխ եղել 2000 թ. բյուջեի ձեւավորմանը, եւ այն նոյեմբերին արդեն պատրաստ էր: ԼՂՀ կառավարության մամլո ծառայությունից հայտնում են, որ նիստում հավանություն տվեցին նաեւ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքների նախագծերին, որոնք սահմանված կարգով կներկայացվեն խորհրդարանի քննարկմանը: Հաստատվեցին ԼՂՀ պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման կարգը, էլեկտրական էներգիայից օգտվելու, ինչպես նաեւ բնակելի ֆոնդի պահպանման եւ շահագործման կանոնները: Ընդունվեց որոշում «Բանագրավված, հոգուս պետության տիրազուրկ ճանաչված եւ ժառանգության իրավունքով պետությանն անցած նյութական ու դրամական արժեքներն օգտագործելու մասին»: Որոշումներ կայացվեցին բանադատվածների համար օրենքով սահմանված իրավունքների եւ արտոնությունների իրականացման միջոցառումների, բանադատվածների կարգավիճակ ունեցող անձանց կամ նրանց առաջին հերթի ժառանգներին վկայական տալու կարգի, նախկինում կենսաթոշակի անցած զինծառայողների կենսաթոշակները վերահաշվարկելու կարգի եւ ժամկետների վերաբերյալ: Նիստի աշխատանքներն ամփոփեց ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանը:

Երկրաշարժ Կասպից ծովում

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՐՏ, ՄՆԱՐՔ: Մարտի 21-ին տեղի ժամանակով 18:00-ին 7 բալ ուժգնությամբ երկրաշարժ է գրանցվել Կասպից ծովի իրանական հատվածում: Այդ մասին հաղորդեցին Հայաստանի սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունում: Հաղորդման համաձայն, զոհեր եւ ավերածություններ չկան: Լեռնային Ղարաբաղի բնակիչների վկայությամբ անհնարին ուժգնությամբ սարերկրյա ցնցումներ են զգացվել նաեւ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԱՐԱԳՐԵՐ

22 Մարտ

9.00 Հայլուր
9.20 Սերիալ «Սուրճ՝ կնոջ բուրմունքով»
10.15 Իմ տունը
10.20 Մամուլի կրպակ
10.30 Գ/Ֆ «Առաջին հայացքից»
12.40 Բարի ախորժակ
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Արեգ
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ՝ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 «Լուսավոր եւ գեղեցիկ աշխարհ»
19.30 Մնջախաղի թատրոնը
19.50 Ռուբիկոն
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայլուր
21.40 Ազգային ժողովի նիստում. հայտարարություններ. հարցեր կառավարությանը
(արբանյակային հեռարձակմամբ)
21.40 Գ/Ֆ «Պեպո»
23.10 Փաստագրական կինոնկար «Էյյուդ» (Վլադիմիր Հարությունյանը)
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

ՊՐՈՄԵԹԵԻՍ

9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.00 Սերիալի դրեմիերա «Ամեն ինչ հանուն քո սիրո» (2-րդ մաս)
17.00 Առողջ լոսն
18.00, 20.30 Լրաբեր
18.20 Մանկական ժամ. սերիալ «Նինձա կրիաները», սերիալ «Սոլոսին»
19.10 Սերիալ «Ամեն ինչ հանուն քո սիրո» (3-րդ մաս)
19.35 «Մեծ էրմիտաժ». Իսպանիայի արվեստը
21.00 «Պավարոտտին եւ իր ընկերները»
21.35 Գ/Ֆ «Սոլեգինը»
23.40 Երաժշտություն կեսգիշերից առաջ
24.00 Լրաբեր (հուսերեն)

2

9.00 Տոմար
10.30 Ավետա (կրկնություն)
11.00 Ասպարեզ (կրկնություն)
19.05 Շղջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Գիտաստղ
20.30 Կամ-կամ
21.10 Խոշոր շահումը ներկայացնում է
22.05 Գ/Ֆ «Սրանիր ինձ նորից»
00.35 Սուք սենյակ
1.00 Գ/Ֆ «Մահացած ոտեգիոենտներ» (ավարտին՝ Սուրհանդակ)

4

7.00 Բարի առավոտ
9.20 Ընտրություններ-2000
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ուրվական որսացողները»
16.45 Հրաշալի ընկերախումբ
17.00 Տունգլիների կանչը
17.25 մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Ընտրություններ-2000
19.30 Դիմակներ-շոու
20.00 Սարդը եւ օրենքը
20.45 Սերիալ «Մահաբեր ուժ»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 ժամանակ
23.00 Սերիալ «Դիմակայում»
00.05 Վավ. սերիալ «Տասը տարի, որ ...»
00.50 Նորություններ
01.05 Քաղաքակրթություն
01.35 Գ/Ֆ «Սգենար գրիր» (դերերում՝ Ե. Փեք, Դ. Փայվեն, Դ. Ուիլյամս, Ու. Շոն, ԱՄՆ, 1997 թ.)

РТР

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20–10.20 Բարի լույս, Ռուսաստան
9.25 Հերթապահ բաժանմունք
9.40 Ընտանեկան նորություններ
10.20 Քվանտային բժշկագիտություն
10.30 Հեռուստահանդես «Արենա-սպորտ»
11.00 Հոմեոպատիա եւ առողջություն
11.15 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հերթապահ բաժանմունք
13.25 Մոսկվա-Մինսկ
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.25 Հեռուստահանդես
15.00 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ «Վայրի հրեշակը»
16.40 Իմ ընտանիքը
17.35 Խանութ բազմոցի վրա
18.20 Աշտարակ
19.10 «Ռոսիա» կինոթատրոն. Ալեքսեյ Ժարկովը. Վիկտոր Պավլովը. Վալոդիմիր Էստրոը «Մի արքայադեմ (նած շանը» ֆիլմում (1-ին սերիա)
20.25 «Կլոռ սեղան»
21.50 Կինոյի ժամ. դրեմիերա. գ/Ֆ «Անդունդ» (ԱՄՆ, 1-ին սերիա)
23.45 Կինո+TV
01.20 Հերթապահ բաժանմունք
01.30 Խանութ բազմոցի վրա

Հայաստանի ամերիկյան համալսարանի
հատուկ դասընթացների բաժին

Դասախոսությունների շարք ծրագիր
«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր
Արամ Աբրահամյանը
ներկայացնում է
«Չորրորդ իշխանությունը Հայաստանում»

Չորեքշաբթի, մարտի 22-ին, ժամը 18:00-ին
Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում
Դասախոսությունը կընթանա հայերենով,
անգլերեն համընթաց թարգմանությամբ
Մուտքն ազատ է
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58

ARMENTEL
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմենտելը հայտարարում է մրցույթ կցորդիչների մատակարարման: Մրցույթին կարող են մասնակցել ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ արտասահմանում գրանցված կազմակերպությունները եւ մատակարարները:

Մրցույթի անցկացման պայմանների, ինչպես նաեւ կցորդիչների տեխնիկական տվյալների մասին համապատասխան փաստաթղթերը կարող եք ստանալ հետեւյալ հասցեով՝ Սիարոնյան 2, 6-րդ հարկ, 634 սենյակ, հեռ. 28-70-66:

Առաջարկները պետք է ներկայացվեն վերոհիշյալ հասցեով մինչեւ 2000 թ. մարտի 28-ը, ժամը 12.00:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՋ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ինտերնետ Միությունը

(ԻՄ) հայտարարում է ընդունելություն
Windows NT 4.0, UNIX - Novell 4. 1
օպերացիոն համակարգերի ցանցային
ադմինիստրատորների պատրաստման դասընթացների:

Դասընթացի տեւողությունն է 75 ժամ, օրական 4-5 ժամ: Դասերը անց են կացվելու ուսանողների հետ համաձայնեցված օրերին եւ ժամերին: Դասերը ավարտելուց տրվում է համապատասխան օպերացիոն համակարգի ցանցային ադմինիստրատորի սերտիֆիկատ: Ուսանողների քանակը խմբում 10-12 հոգի: Դասընթացի արժեքը $190-ին համարժեք դրամ:

Դասերը անցկացվում են Միության կենտրոնում, Փավստոս Բուզանդ 3/1 հասցեով, Երեւաննախագիծ ինստիտուտի շենքի 7-րդ հարկում:

Մանրամասնությունները՝ 582760 հեռախոսահամարով:

ՀԱՅ
1965 թ. գործող Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամավորական ծառայության կոմիտեի անդամ է, հրավիրում է մասնակցելու Եվրոպայի երկրներում, ԱՄՆ-ում, Հայաստանում միջազգային աշխատանքի ճամբարների ամառային ծրագրերին որպես կամավորական:
Դիմումներն ընդունվում են հետեւյալ հասցեով՝ կոտյանի 19ա, 7-րդ հարկ
Հեռ. 52 27 01, 52 27 72, 52 27 88

Ի ԼՈՒՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ

Մամուլի ազգային ակումբը «Հրատարակ թեմա» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման Ինֆոնորոշում միավորման գաղափարախոս, ՀՀ նախագահի աշխատակազմին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ Պարույր Հայրիկյանի հետ:
Հանդիպումը կկայանա մարտի 22-ին, ժ. 11-ին, «Հոլսթեն» սրճարանում (Փավստոս Բուզանդի 1/3):
ՄԱԿ

@rmineo Global Telecommunications
Անվճար համակարգչային ուսուցում՝ ԻՆՏԵՐՆԵՏ դպրոցում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1226. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 21.03.2000. Գինը՝ 100 դրամ